Վեցքսաներ տարի

№ 47-48

27 Դեկտեմբերի 1887

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԱՒԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՒՐԱԿԻ ՕՐԵՐՐ

Տարեկան բաժանորդագինն է 4 ռուբլի։ Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔ»-ի խմբագրատանը և կենտրոնական Գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, Редакція „Арцаганкъ“.

Առանձին համարները 10 կ. Յայտարարութիւնների տառին 2 կ.

1888-ԻՆ

(ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ԹԱՒԹԱԹԵՐԹԸ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ

ՄԻԵՒՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՀԵՏԵՒԵԱԼ ՊՐՕԳՐԱՄՄԱՅՈՎ.

I. Տեղեկութիւններ կառավարութեան գործադրութիւնների և օրէնսգրական մի քանիների մասին։—II. Առաջնորդող յօդուածներ հասարակական կեանքի նշանաւոր հարցերի վերաբերութեամբ։—III. Թղթակցութիւններ հայաբնակ տեղերից. ընդհանուր տեսութիւն հայ և օտար լրագիրների տեղեկութիւնների և կարծիքների։—IV. Տնտեսական և առևտրական հարցերի քննադատութիւն։—V. Յօդուածներ ժողովրդական կրթութեան վերաբերութեամբ։—VI. Արտաքին տեսութիւն. յօդուածներ և տեղեկութիւններ արտասահմանեան հասարակական և քաղաքական կեանքի նշանաւոր անցքերի մասին։—VII. Կրիտիկա և մատենախօսութիւն։—VIII. Ֆելիետօն։—IX. Զանազան լուրեր։—X. Յայտարարութիւններ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» 1888 Թ. Կ'ԱՇԽԱՏԱԿՑԵՆ ԲՈԼՈՐ ՆԵՐԿԱՑ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ.

Տարեկան բաժանորդագինն է . . 5 ր.

Կէս տարուանը . . . . . 3 ր.

Թիֆլիսում տարագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «կենտրոնական գրավաճառանոցում»։

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, въ Редакцію „АРЦАГАНКЪ“. Արտասահմանից՝ Tiflis. Redaction du journal „ARDZAGANG“.

ԱՊԱՒԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ „Արձագանքի“ մասին։ Հանդամանալից ծանուցում Զէյթունի հրկիզեալների։ † Բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանի։ „Արձագանքի“ նեկրոլոգ համարը։ Սամսոն Լ „վէպի վերջը։ „Խազ-Փուշի“ թարգմանութիւնը։ Պ. Ղ. Աղայեանցի հասցէին։ Դիսս և հշեր։ Լուրեր „Արևելքից։ Կ. Պոլսից լուր։ Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս։ Արքունական հայ գիւղացին Անդրկովկասում։ Մանկավարժական պատիժ։—ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ։—ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ։ Պ. Ղ. Աղայեանցի քննադատութիւնը „Մայրենի լեզուի քերականութեան“ առաջին մասի վերաբերութեամբ։—ՖԵԼԻԵՏՕՆ։ Սամսոն Լ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յունվար ամսից «Արձագանքը» մտնում է իւր գոյութեան եօթներորդ շրջանը։ Յետագայ 1888 թուի առաջին համարը լոյս կ'տեսնէ յունվարի 17-ին։ Ապագայ տարին մեր մշտական աշխատակիցները լինելու են. պ. պ. Աբէլեան Ն., Բէհբութեան Իշխ. Կ., Րաբայեան բժ., Երիցեան Ղ., Մատինեան օր. Մար., Յարոյ, Հիւրմանզադէ, Պատկանեան Յակոփայել, Սունդուկեանց Գ., Վաղինակ, Տէր-Ղևոնդեան Ն., Բաֆֆի և Չարաժեան։

Ըմն անձինք, որոնք կամենում են բաժանորդ գրուել, թող օր առաջ յայտնեն իրանց ցանկութիւնը։ Ոչ ոքին, առանց

ու է քաջատուրթեան, Համարները չէն ուղարկուիլ, եթէ նախապէս վերանորոգած չը լինին բաժանորդագրութիւնը կամ խրատուրթեանը ուղղած չը լինին բերանացի կամ գրաւոր առաջարկութիւն։

***

Դեկտեմբերի 13-ին սրբազան Արիստակէս եպիսկոպոսը հրաւէրք էր ուղարկել Թիֆլիզի Հայ Հասարակութեան բոլոր դաստակարգերի ներկայացուցիչներին՝ ժողովուել Ս. պատարագից յետոյ առաջնորդարանի դահլիճը։ Առաջնորդը մի ատենաբանութեամբ բացագրեց հասարակութեանը նախընթաց օրը Թիֆլիզի եկեղեցիներում ընթերցուած կոնդակի մեծ նշանակութիւնը, որով ազգիս Հայրապետը պատուիրում է բանալ ժողովարարութիւն կամաւոր նուիրատուութիւնների յօգուտ հրկիզուած և սովատանջ Չէյթունցիների։ «Օգնութեան ձեռք կարկառելով մեր տառապեալ եղբայրներին, աւելացրեց Սրբազանը, մենք ոչ միայն մի քրիստոնէական և ազգային պարտք կատարած կը լինինք, այլ և կ՝ապացուցանենք թէ Ս. Էջմիածնոյ հաւատարիմ զաւակներն ենք, թէ Հայրապետիս առաջին հրաւէրը բովանդակ ազգին ուղղած, արձագանք գտաւ ամեն հայի սրտում։»

Այնուհետև նորին Սրբազնութիւնը սրտառուչ կերպիւ նկարագրեց լարուած ուշադրութեամբ լսող հանդիսականներին Չէյթունի հրկիզեալ և սովեալ մեր սիրելի եղբայրների ողէտալի վիճակը, չարիքի մեծութիւնը, շուտափոյթ օգնութեան կարևորութիւնը և առաջարկեց մի մասնաժողով ընտրել հանգանակութեան գործը առաջ տանելու համար։ Հասարակութիւնը յայտնեց թէ սիրով կ՝կատարէ իւր Առաջնորդի առաջարկութիւնը՝ եթէ ինքը Սրբազանը բարեհաճէ ընդունել իւր վերայ ընտրելիք մասնաժողովի ապագայ գործունէութեան ղեկավարութիւնը։ Արիստակէս եպիսկոպոսը պատասխանեց, թէ ինքը, համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատուէրի, պատրաստ է ամենայն չանք և աշխատութիւն յանձն առնել։ Այնուհետև քանի մի խնդիրներ պարզելուց յետոյ, երկու մասնաժողովներ ընտրուեցան՝ մէկը հանգանակիչ՝ որ կազմում են պ. պ. Ալէքսանդր Մանթաշեան, Կարապետ աղա Մուրադեան, Միքայէլ Թամամշեան, Ալէքսանդր Մելիք Ազարեան, Պօղոս Մելիք-Ղարագեօզեան, Յովհաննէս Զիլթախեան, Գէորգ Յակոբեան, Ս. Ալէքսանդր Յովնանեան ընդ նախագահութեամբ Թեմիս Առաջնորդի, և միւսը յօգուտ Չէյթունցոց թատրոնական ներկայացումներ և հասարակական հանդէսներ կազմելու, ուր միաձայն հաւանութեամբ ընտրուեցան՝ իշխան Նապօլէն Ամատունի, Աբգար Յովհաննիսեան և իշխան Կոնստանդին Բէկլեմիշեան։

—

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 25 դեկտեմբերի 1887 թ.

Մեծապատիւ Տէր.

Ի նպաստ Չէյթունի հրկիզեալ և սովատանջ ազգայնոց կազմուած Յանձնաժողովս հանգանակութիւն բացած լինելով՝ կը փութայ Ձեզ յղել նուիրատուաց առաջին ցուցակը, խնդրելով որ բարեհաճիք հրատարակել Ձեր պատուական շաբաթաթերթին մէջ։

Ի դիմաց Մասնաժողովի Կարապետ Մանթաշեան։

Մեծապատիւ Տէրտէր.

Փլեթչեան և ընկ. 500 ր., Յովհաննէս Զիլթախեան 350 ր., Ալէքսանդր Մանթաշեան 350 ր., Կարապետ Մանթաշեան 350 ր., Ալէքսանդր Մելիք-Ազարեան 200 ր., Գէորգ Տէր-Աստուածեան 200 ր., Բաղչի Եղիազարեանց 100 ր., Նիկողայոս Բոզաջեանց 100 ր., Յակոբ Մելիքեան 100 ր., Իշխան Նապալէօն Ամատունի 100 ր., Յովհաննէս Գուրգենբէգեանց 100 ր., Յովհաննէս Թումեանց 100 ր., Սահակ Գևորգեան 100 ր., Նիկողայոս Միրզայեանց 100 ր., Սահակ Յովհաննոս Իշմիրեանց 50 ր., Պ. Մելիք-Ղարագեօզեան 50 ր., Գրիգոր Շահրիեանց 50 ր., Կարապետ Աբգումանեանց 50 ր., Խոսրով Աբգումանեանց 50 ր., Գրիգոր Բալենդուխեանց 50 ր., Միքայէլ Միրզայեանց 50 ր., Աստուած Տէր-Յակոբեան 50 ր., Գրիգոր Մելիվինեան 50 ր., Աղէքսանդր Փլեթնեան 50 ր., Կոնստանդին Ալիխանեան 50 ր., Միքայէլ Մելիքեան 50 ր., Եղոր Դաւթեանց 50 ր., Գրիգոր Թամամշեան 50 ր., Յարութիւն Մուրինեանց 50 ր., Յովհաննէս Ռոստենեանց 30 ր., Բարեղ Բաբխուդարեան 30 ր., Յովհաննէս Քէվրինեան 30 ր., Գէորգ Ռոստենեան 30 ր., Քազազեանց Ա. Մատինեան 25 ր., Ա. Մելիանց 25 ր., Գէորգ Հէջուբեան 25 ր., Նիկողայոս Փլեթնեան 25 ր., Ալէքսանդր Բաբանասեան 25 ր., Յարութիւն Գուրգենեան 25 ր., Բժ. Շահ-Պարոնեան 10 ր., Յովհաննէս Եւանգուլեան 10 րուբլի։ Ընդհանուր գումարն է 3790 րուբլի։

—

Ստացանք Մոսկուայէ հայ ուսանողներից յօգուտ Չէյթունի հրկիզեալների 19 ր., Բիլոյէ հայ ուսանողներից 10 ր. և յանձնեցինք թեմիս Սրբազան Առաջնորդին։

***

† ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ներկայ 15-ին, երեքշաբթի երեկոյեան 10½ ժամին կնքեց իւր մահկանացուն շաբաթաթերթիս խմբագրի հայրը, բժշկապետ Յարութիւն Յովանիսեանը։

Հանգուցեալի թաղման հանդէսը կատարուեց շաբաթ օրը, ամսոյս 19-ին։ Նախընթաց երեկոյեան, 7 ժամին, հանգուցեալի բնակարանում տեղի ունեցաւ հոգեհանգիստը Վրաստանի և Իմերէթի սրբազան առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսի ներկայութեամբ։ Իրանց յարգանքը հանգուցեալի յիշատակին մատուցանելու համար նոյն երեկոյ հոգեհանգիստին ներկայ էր Թիֆլիզի հայ և օտար հասարակութիւնը -- հանգուցեալի նախկին պաշտօնակիցները, ընկերները, բարեկամները...

Հետևեալ օրը, առաւօտեան 10 ժամին, նոյն հասարակութեան և սրբազան առաջնորդի ուղեկցութեամբ հանգուցեալի դագաղը տեղափոխվեց Մողնու ս. Գէորգ եկեղեցին, որի չերմեռանդ ծխականն և մի ժամանակ երեցփոխանն է եղել նա։ Դագաղը տնից դուրս բերին իրանց ուսերի վրայ Թիֆլիզի բժիշկները, որոնց կողմից

գադաղի վրայ դրած էր մի պսակ։ Պատարագը կատարեց Սրբազան առաջնորդը։ Յետ պատարագի, Սրբազանը մի քարոզ ասաց, որով նա թուում էր ուննկնդիր Հանդիսականներին Յարութիւն Յովհաննիսեանի կատարած օգտաւէտ գործերը հասարակական այլ և այլ ասպարէզներում, և բացատրում էր բուն հասարակական գործիչի կոչումը և գործելու ղեկավարող զգացմունքները և սկզբունքները։ Ապա մի ճառ խօսեց Հանգուցեալի ժամանակակից գործիչներից մէկը, պ. Ֆ. Իզմիրեանցը, յիշատակելով նորա համակրելի գործունէութեան գլխաւոր կէտերը։

Այնուհետև մարմինը տեղափոխվեց Վերայի գերեզմանատունն։ Այստեղ նա ամփոփուեց Յովանիսեան գերդաստանի սեպհական գերեզմանոցում, իւր կողակցի շիրիմին քով։

«Ներկայ դեկտեմբերի 15-ի երեկոյեան Թիֆլիզում վախճանուեցաւ իւր ժամանակին մեր ամենաժողովրդական գործիչներից մէկը — Իսկական Պետական Խորհրդական, բժշկապետ և մանկաբարձ Յարութիւն Յովհաննիսեան Յովհաննիսեանը։ Վերջին տարիների յարատև ծանր հիւանդութիւնը զրկեց նորան իւր սովորական գործունէութիւնը շարունակելու կարողութիւնից, բայց նորա անունը վայելում է արժանաւոր հոչակ տեղային ազգաբնակութեան բոլոր խաւերի մէջ։ Չի մոռանալ հանգուցեալին և այն բազմաթիւ բանուոր դասակարգը, որը, պարբերապէս և ամենայն տարի Պարսկաստանից և Տաճկաստանից գալով մեր երկիրը օրուայ պարէնը հայթայթելու և ենթարկուելով այստեղ ձախորդութիւնների, այնքան յաճախ կարօտում էր բժշկական օգնութեան։

Շատ հեռու կը տանէր մեզ քայլ առ քայլ նկարագրել Հանգուցեալի պաշտօնական գործունէութիւնը։ Շատանանք այստեղ միայն մի քանի փաստեր առաջ բերելով։

Հանգուցեալ Յովհաննիսեանի նախնիքը պատմական Ջուղա (Արաքս գետի վերայ) քաղաքից են, որ դեռ XVII դարում աւերել է Շահ-Աբբասը։ Ինքը Հանգուցեալը քահանայի որդի է, ծնուել է 1822 թ.[1]) և կրթուել է Մոսկվայի Կայսերական բժշկա-վիրաբուժական ճեմարանում, ուր 1840 թ. աւարտելով ուսման ընթացքը, արժանացել է առաջին կարգի բուժիչի աստիճանին, և նշանակվվել է ազքատների համար հիմնարկուած Մարիինսկիյ հիւանդանոցում օրդինատոր։ Սակայն երկար ժամանակ նա չը մնաց այստեղ։ Հայրենիքը գրաւում էր նորան դէպի ինքը, և 1841 թուին Յ. Յ. Յովհաննիսեանը արդէն Երևանի քաղաքային բժիշկ նշանակուեց։

Շուտով Երևանեան նահանգում յայտնուեց ժանտախտ, և հազիւ 20 տարեկան հասակին մօտեցած երիտասարդ բժշկի առջև բացվեց գործունէութեան ընդարձակ ասպարէզ։ Այդ նշանաւոր գործում հանգուցեալի արած ծառայութիւնները արժանացան Կայսերական Ամենաողորմած վարձատրութեան դրամական պարգևով և ինքը տեղափոխվեց Թիֆլիզ «Անդրկովկասեան երկիրը ժանտախտային վարակումից ազատվող մասնաժողովի» մէջ բժշկի պաշտօնով։ Ժանտախտը վերջանալուց յետոյ, Յովհաննիսեանը նշանակվեց Թիֆլիզի քաղաքային հիւանդանոցում բժիշկ, ուր կարողութիւն ունեցաւ ի մօտոյ ծանօթանալ քաղաքային և եկուոր ազգաբնակութեան սկեաքերի հետ։ Մի քանի տարի մնալով այդ պաշտօնում, նա յաճախ կատարում էր յիշեալ հիւանդանոցի և տեսչի պարտաւորութիւնները։ 1853—1856 թ. Ռուս-Տաճկական պատերազմի ժամանակ Յ. Յ. Յովհաննիսեանը շատ անգամ կատարել է Թիֆլիզի բժշկական վարչութեան անդամի պաշտօնը և միաժամանակ եղել է և այստեղի Ս. Նինուէ դպրոցի բժիշկը։ Պատերազմից յետոյ, 1856 թուին, նա գնացել է Մոսկվա, ուր, կարևոր հարցաքննութիւններից յետոյ, Կայսերական բժշկա-վիրաբուժական ճեմարանի կօնֆէրենցիայի կողմից արժանացել է մանկաբարձի կոչմանը, բժշկապետի աստիճանին և գաւառական բժշկի ու բժշկական վարչութեան տեսչի կոչումներին։ 1857 թուին վերադառնալով Թիֆլիզ, Յ. Յ. Յովհաննիսեանը նշանակվել է նախ Թիֆլիզի բժշկական վարչութեան մանկաբարձ-բժիշկ, ապա վարել է նոյն վարչութեան տեսչի պաշտօնը և, վերջապէս, այդ պաշտօնում հաստատուել է 1865 թուին։ Այնուհետև նա ստանձնել է Թիֆլիզի նահանգական բանդերի հոգաբարձութեան դիրեկտօրի պաշտօնը, իսկ 1868 թ. նշանակվել է քաղաքական վարչութեան բժշկական մասի անհրաժեշտ անդամ։ 1868 թ., արդէն Իսկական Պետական Խորհրդականի աստիճանում, նա մի քանի անգամ յաջողութեամբ վարել է մեր երկրի քաղաքական կառավարութեան բժշկական մասի կառավարչի պաշտօնը, որի համար արժանացել է Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքայի բարձրագոյն շնորհակալութեան։ Նորին Կայսերական Բարձրութեան ուշադրութիւնը դէպի Յ. Յ. Յովհաննիսեանը այնքան մեծ էր, որ վերջինը արժանացաւ Նորին Բարձրութեան Օգոստոփառ զաւակների բժիշկը լինելու պատուին։ 1872 թուին հիւանդութեան առաջին նշանները Յ. Յ. Յովհաննիսեանին ստիպեցին խնդրել, որ բժշկական պաշտօններից արձակուի և Փոխարքայի գլխաւոր կառավարչութեան մէջ նշանակուի, որ և յարգվում է։ 1880 թուի սկզբին նա խնդրում է, որ բոլորովին արձակեն իրան ծառայութիւնից, որից յետոյ տարեկան 1500 րուբլ Բարձրագոյն նշանակուած մշտական թոշակով հրաժարվում է ի հանգստութիւն։

Այս է հանգուցեալի գործունէութեան պաշտօնական մասը, որ իւր ժամանակին վարձատրվել է Բարձրագոյն պարգևներով։ Նա եղել է հետևեալ շքանշանների ասպետ. Ս. Ստանիսլավ առաջին, երկրորդ և եր-

[1]) 1819 թ.

րորդ աստիճանների, Ս. Վլադիմիրի 3 աստիճանի, Ս. Աննայի 2 աստիճանի Կայսերական թագանշանով և առանց թագանշանի և այլն։ Բացի սորանից, պարսկական-հպատակներին բժշկելու համար, որ միշտ դիմում էին պարսկական և տեղային լեզուներին հմուտ Յ. Յ. Յովհաննիսեանին, վերջինը արժանացել է Պարսից Շահի կողմից Առիւծի և Արևի 1, 2 և 3 աստ. շքանշաններին։

Բացի իւր պաշտօնական գործունէութիւնից, Յովհաննիսեանը ժամանակ էր գտնում և արտայայտում էր հասարակական ծառայութեանց ասպարիզում նշանաւոր եռանդ։ Նա ութ տարի եղել է մեր քաղաքային խորհրդարանի ձայնաւոր, երկու անգամ ընտրուել է Թիֆլիզի Հայոց Ներսիսեան դպրանոցի հոգաբարձու, ուր նա 17 տարի շարունակ ձրիաբար բժշկել է աշակերտներին և մի առ ժամանակ վարել է նոյն դպրանոցի տեսչի պաշտօնը։

Ի վերջոյ աւելացնում ենք և այն, որ Յ. Յ. Յովհաննիսեանի անունը յայտնի է Կովկասեան գրականութեան մէջ։ Ի միջի այլոց, մատնացոյց կանենք նորա ռուսերէն լեզուով գրուած «Խօրժոմը և նորա հանքային աղբիւրները» վերնագրով գիրքը, տպուած 1878 թ.։

Հանգիստ ոսկերացդ—արժանաւոր գործիչ!

(«Կովկազ»)

Դեկտեմբերի 15-ին, երեկոյեան $10^1/_2$ ժամին երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ, կնքեց իւր մահկանացուն Իսկական Պետական Խորհրդական բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանը, 68 տարեկան հասակում։ Հանգուցեալը երևանեան նահանգի բնիկ էր։ Իւր սկզբնական կրթութիւնը ստանալով Մոսկվայի Լազարեան ձեմարանում արևելեան լեզուների, ապա ուսուցելով Կայսերական բժշկա-վիրաբուժական ձեմարանի դասընթացքը 1840 թուականին և ստանալով առաջին կարգի բուժիչի աստիճանը, նշանակվում է Մարիինսկիյ չքաւորաց հիւանդանոցում օրդինատոր։ Հետևեալ տարի նա երևանեան քաղաքային բժշկի պաշտօնով տեղափոխվում է Անդրկովկասեան երկիր, ուր եռանդուն մասնակցութիւն է ունենում 1843 թուի ժանտախտային վարակումը ընդհատելու գործում, և ապա յաջորդաբար վարում է Գանձակի գաւառային բժշկի, Թիֆլիզի քաղաքային հիւանդանոցի, բժշկական վարչութեան անդամի, սորա մանկաբարձի և տեսչի, Կովկասեան քաղաքական կառավարութեան բժշկական մասի վարչութեան անդամի պաշտօնները, վարում է և վերջինի կառավարչապետի պաշտօնը մի տարի ժամանակ։ Այնուհետև մի առ ժամանակ Կովկասեան Փոխարքայի գլխաւոր կառավարչութեան վերաբերմամբ ծառայելով, 1873 թուականին հրաժարվում է իւր պաշտօնից։ 1856 թուին բժշկա-վիրաբուժական ձեմարանի կօնֆերենցիան հարցաքննելով և հաւանութիւն տալով Յովհաննիսեանի «de epilepsia» (հանգուցեալը կատարելագէս տիրապետում էր լատինական լեզուին, իսկ նորագոյններից - գերմանականին) անունով գեկուցմանը, նորան արժանացնում է բժշկապետի կոչմանը։ 1864 թուականին, ներկայացմամբ հանգուցեալ Աւագ-բժշկապետ (Լէյբ-Մեդիկ) Ա. Ս. Լիբայուի առաջարկութեամբ, որ Յովհաննիսեանի դասընկերն էր, վերջինը հրաւիրվում է Նորին Կայսերական Բարձրութեան Կովկասեան նախկին Փոխարքայի զաւակների բժիշկը լինելու։ Հանգուցեալի բարեսրտութիւնը և օրուայ և գիշերվայ ամեն մի ժամին իւր կարօտեալ եղբայրակիցներին ոչ միայն գիտութեամբ, այլ և նիւթական օժանդակութեամբ օգնելու պատրաստակամութիւնը առաձների շարքն է անցել, և երկար տարիների ընթացքում Թիֆլիզի հասարակ ազգաբնակութիւնը չէր ճանաչում մի այլ բժիշկ, բացի «Արեամ Իվանիչ»-ը։ Այդ եռանդուն գործունէութիւնը, հիւանդների անկողնու մօտ անցուցած անհանգիստ գիշերները, ջերմաջերմ սիրեցեալ ամուսնի կորուստը և վերջին տարիների մի քանի պաշտօնական անախորժութիւններ քայքայեցին Յովհաննիսեանի ամուր առողջութիւնը և ծագեցրին նորա մէջ մի հիւանդութիւն, որ, յարատև չարչարանքներից յետոյ, տարաւ նորան դէպի գերեզման։ Հանգուցեալը հեռու չէ եղել նոյնպէս և հասարակական և գրականական գործունէութիւնից։ 1878 թուին ռուսերէն լեզուով գրած նորա «Խօրժոմը և նորա հանքային աղբիւրները» վերնագրով գիրքը մինչ այսօր ևս մնում է իբրև մի ձեռնարկ մեր երկրի ամենալաւ կուրօրտը այցելողների համար, իսկ Երևանում հանգուցեալի քեռորդի բժիշկ Տիգրանեանցի խմբագրութեամբ հրատարակուող «Առողջապահական թերթ» ամսագիրը ունէր հանգուցեալ Յովհաննիսեանի մէջ մի անխոնջ աշխատակից *)։ Հանգուցեալը մի քանի քառամեակներ եղել է Թիֆլիզի քաղաքային խորհրդարանի ձայնաւոր և քաղաքի առողջապահութեան վերաբերեալ բոլոր յանձնաժողովների մէջ ունեցել է գործօն մասնակցութիւն, և մի քանի անգամ Թիֆլիզի Ներսիսեան հոգևոր դպրանոցում ընտրուել է հոգաբարձու...

(«Նովօե Օբօզրէնիէ»)

Շաբաթ օր, 19-ին դեկտեմբերի կատարուեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանի թաղումը։ Հանգուցեալը, որքան մեզ յայտնի է հայերից առաջինն էր, որ Դօրպատի [1]) համալսարանում բժշկական ուսում էր ստացել բժշկապետ կոչումով։ Որպէս բժիշկ նա մի ժամանակ մեծ ժողովրդականութիւն

*) Հանգուցեալ բժշկապետը մի շարք առողջապահական յօդուածներ պահպանել է նաև „Հայկական աշխարհ“ ամսագրի մէջ։

[1]) Հանգուցեալը ստացել է իւր ուսումը Մոսկվայի Համալսարանում։

ունէր Թիֆլիսում, մանաւանդ մեր ազգաբնակութեան միջին և ստորին դասակարգերի մէջ։ Փոխարքայութեան ժամանակ հանգուցեալը բարձր պաշտօնների էր հասել. նա երկրիս քաղաքական բժշկական մասի գլխաւորն էր և մի ժամանակ Մեծ Իշխանի պալատում տնային բժիշկ էր։

(«Մշակ»)

Տեղական լրագիրները հաղորդեցին, որ քաղաքային խորհրդի դեկտ. 21-ի նիստում պ. քաղաքագլուխը նախ քան բանալուց յետոյ առաջարկեց ժողովին ոտքի կանգնելով յարգել հանգուցեալ բժշկապետ Յովհաննիսեանի յիշատակը, որ Թիֆլիսի մէջ քաղաքային ինքնավարութիւն ներմուծելու օրից, ընտրուած է եղել քաղաքային խորհրդի իրաւասու և որ միայն իւր հիւանդութեան պատճառով վերջին տարիները ստիպուած է եղել դադարել՝ իւր ոյժերը նուիրելու քաղաքի հասարակական շահերին։

Այն բոլոր անձանց և հաստատութիւններին, որոնք հաճեցին յայտնել մեզ իրանց ցաւակցութիւնը մեր հօր մահուան առիթով և յարգել հանգուցեալի յիշատակը, ընդ սմին խնդրում ենք ընդունել մեր խորին շնորհակալութիւնը։

ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

*
* *

Մեր շաբաթաթերթի անցեալ համարը չէր կարող լոյս տեսնել. ուստի այսօր մենք հրատարակում ենք 47 և 48 համարները միասին։

*
* *

Ներկայ համարում վերջանում է պ. Րաֆֆիի «Սամուէլ» վիպասանութեան առաջին, երկրորդ և երրորդ գրքերի տպագրութիւնը։ Չորրորդ և վերջին մասը հանդերձ ծանօթութիւններով հաւանականօրէն լոյս կը տեսնէ առանձին տպագրութեամբ նոյն իսկ 1888 թուի ընթացքում։ Մեր տաղանդաւոր վիպասանը այսուհետև ևս անընդհատ աշխատակցելու է մեզ թէ ընդհանուր բովանդակութիւն ունեցող յօդուածներով և թէ մանաւանդ փոքրիկ վիպական գրուածքներով։

*
* *

Այս օրերս ռսերէն լեզուով թարգմանուել է «Արձագանքի» անցեալ տարուայ 27 և 28 համարներում տպուած պ. Րաֆֆիի «Խազ-Փուշ» անունով պատկերը պարսկական չքաւորների կեանքից։ Թարգմանութիւնը յանձնուած է տեղւոյս «Նովոէ Օբօզրէնիէ» ռուս լրագրի խմբագրութեան, և լոյս կը տեսնէ յունվար ամսին։ Բայի այս քանի մի երիտասարդները այժմ զբաղուած են պ. Րափայէլ Պատկանեանի վէպիկների թարգմանութեամբ, որոնք արդէն լոյս են տեսել գերմաներէն լեզուով «Armenische Bibliothek» հրատարակութեան մէջ և կը տպագրուեն մասամբ յիշեալ ռուս լրագրի մէջ, մասամբ մայրաքաղաքի լրագիրներում կամ ամսագիրներում։

*
* *

ՊԱՐՈՆ Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ ՀԱՍՑԷԻՆ

Շատերի սովորութիւնն է, երբ նրանց հետ որ և է հարցի մասին վիճում ես, աշխատում են վիճաբանութեան իսկական առարկան մի կողմ դնել, և մի այլ, հարցի հետ ոչինչ կապ չունեցող, խնդիրը մէջ նետել, որպէս զի հարցը ալեւի բարդուի, աւելի մթնանայ։

«Արձագանք»-ի 39-րդ համարում տպուած մեր փոքրիկ նկատողութիւնը, որ ուղղուած էր պ. Աղայեանցի հասցէին, շատ պարզ էր և հասկանալի։ Մենք պարոնին յիշեցրել էինք, որ սկզբում նա իւր համակրութիւնը արտայայտեց դէպի մեր աշխատութիւնը՝— «կայծերը», նուիրելով նրան մի բանաստեղծութիւն, իսկ յետոյ նոյն աշխատութեան մասին տպեց «Աղբիւրի» մէջ մի քննադատութիւն, որով թափել էր իւր սրտի ամբողջ մաղձը։

Շեշտելով պ. Աղայեանցի հակասութիւնների վրայ, մեր նպատակը երբէք այն չի եղել, որ ցոյց տանք, թէ մեր աշխատութիւնը որ և է ժամանակ վայելել է նրա համակրութիւնը։ Այլ կամեցանք ապացուցանել, որ նա հոմոչմանդից բոլորովին զուրկ մարդ է, և նրա համակրութիւնը նոյնքան նշանակութիւն ունի, որքան նրա հակակրութիւնը։

Ուրեմն, հարցը շատ պարզ էր դրուած։ Խնդիրը պարոնի նուիրած բանաստեղծութեան մասին էր։ Նա պէտք է կարճ կերպով պատասխաներ. արդեօք նուիրե՞լ է, թէ ո՛չ։

Բայց պ. Աղայեանցը, պատասխանելով մեր նկատողութեանը, ոչ բոլորովին ուրանում է, և ոչ էլ պարզապէս խոստովանում է, թէ, ճշմարիտ է, արել է մի այդպիսի նուէր։ Նա միայն խուլ ակնարկներով ասում է. «Ձեր յիշած ոտանաւորը տպագրուած է «Աղբիւրի» 1884 թուականի երկրորդ տետրում «Սառնամանիք» վերնագրով, ընթերցողները կարող են ստուգել, թէ կա՞յ արդեօք նբրանում Շեքսպիրի հետք դէպի ձեզ և ձեր աշխատութիւնը»։

Կարծես, վէճը «Շեքսպիրի» բառի մասին լինէր։

Պ. Աղայեանցը, որպէս սովորաբար ասում են, կամեցել է բուն խնդիրը կտուրը նետել, և միայն «Շեքսպիրի» բառի պոչից բռնելով, պատասխանում է, թէ ինքը «Շեքսպիրեանը» չէ գրել, և մեղադրում է մեզ, որ մենք բառերը շփոթում ենք միմեանց հետ (*)։ Բառերի գործա-

*) Պ. Աղայեանցը, իւր դատը [illegible]

ծուԹիւնը պ. Աղայեանցից սովորելու բնաւ պէտք չունենք։ Յիշեալ բառը մեր նկատողուԹեան մէջ գործ ենք ածել բոլորովին ծաղրական մտքով։

Ներբողեաններ այժմ ոչ ոք չէ գրում։

Հարցը նրանում չէ, արդեօք պ. Աղայեանցը ներբողեան բանաստեղծուԹիւն է գրել, Թէ մի այլ տեսակ բանաստեղծուԹիւն։—Հարցը նրանումն է, Թէ ինչ առիԹով և ո՞ւմ համար է գրել։

Երբ մի գրող իւր բանաստեղծուԹիւնը նուիրում է որ և է գրքի, շատ ծիծաղելի կը լինէր, եԹէ նա ներբողեան լինէր, այսինքն գովաստանական ճառի ձևով գրուած։ Այլ հարկաւոր է, որ նուէրը ունենար մի ներքին յարաբերուԹիւն, կամ մի խորհրդաւոր առնչուԹիւն նոյն գրքի բովանդակուԹեան հետ, որին նուիրվում է։ Պ. Աղայեանցի՝ «Կայծերին» նուիրած «Սառնամանիքը»**) ունէր այդ յարաբերուԹիւնը։ Մի կողմ Թողնելով նրա իսկական իմաստը, բառական է, եԹէ «սառնամանիք» և «կայծեր» բառերը դնենք միմեանց մօտ,—մէկը սառեցնող և ամեն աճելուԹիւն սպանող զօրուԹիւն, իսկ միւսը ջերմացնող և կենդանուԹիւն տուող զօրուԹիւն։

Այդ բոլորից յետոյ, պ. Աղայեանցը, իւր ոչինչ չապացուցանող պատասխանի մէջ, միամտաբար դիմում է մեզ, ասելով. «Բայց դուք որ արդէն հասկացել էք ձեր սխալը (?!), կարող էք երկու տողով շտկել, իբրև ազնիւ մարդ»։

Մենք պատրաստ կը լինէինք ոչ Թէ երկու տողով, այլ տասն տողով «շտկել» մեր սխալը, եԹէ պ. Աղայեանցը ցոյց տար, Թէ ինչումն է մեր սխալը։ Բայց ով որ առանց փաստերի ուրիշին ազնուուԹեան է հրաւիրում, պէտք է նախ ինքը ազնիւ վարուի. . .

Ր Ա Ֆ Ֆ Ի

*
* *

ԳԻՈՍ ԵՒ ԷՉԵՐ

Մի օր էշերի՝ ամբողջ կարաւան՝
Դէպի Ոլիմպոս՝ ճանապարհ ընկան,
Եւ ստորոտից՝ դիցական լերին՝
Այսպէս զռալով՝ ձայն արձակեցին.

«Ո՛վ ամպրոպային՝ արքայ շանԹառաք,
Մենք խոպառ եղանք՝ խաղք ու խայտառակ,
Այդ ինչ պատիժ էր՝ դու մեզ տուեցիր,
Որ «էշ» անունով՝ մեզ մկրտեցիր։

«Բաւական չէ՞ որ, մենք ամբողջ օրը
Կրում ենք մարդկանց՝ աղբն ու փրսորը,
Եւ մեր մէջքերը՝ մշտական բեռնից՝
Ազատ չեն երբէք՝ անբոյժ վէրքերից։

«Բայց վէրքն ու բեռը, փալանն ահագին,
Չատ վիշտ չեն բերում՝ մեր դառն վիճակին.
Անտանելի է՝ այն ցաւը սաստիկ,
Երբ «էշ» անունն են տալիս մեզ մարդիկ։

«Այդ նախատական՝ անարգ անունից՝
Մեր բեկուած սիրտը՝ խոցվում է խորքից,
Եւ մեր ականջներ, միշտ այդ լսելով,
Երկար ու երկար՝ ձգվում են փուԹով։

«Տուր մեզ նոր անուն, ինչ էլ որ լինի,
Ձուն, գայլ կամ աղուէս, ձի, խոզ կամ ջորի,
Միայն «էշ» անունից՝ դու մեզ ազատիր,
Մեր աղերսանքին, ով տէր, ունկն դիր»։

Դիցական սարի՝ գլխից ամպամած՝
Հզօր Դիոսի՝ ձայնը որոտաց.
—«Ո՞ր երկրից էք, կամ ո՞րտեղացի։
Պատասխանեցին.—«Տէր, ... ցի»

Խնդաց Դիոսը, խինդն աստուածային՝
Ձարժեց Ոլիմպի՝ ամբողջ գագաԹը։
—«Գնացէ՛ք»,—ասաց,—«անուան փոխարէն՝
Լաւ է, որ փոխէք՝ ձեր վատ խասեաԹը։

—«Անուան պատճառով՝ չէր որ դուք եղաք
Մարդկանց աչքումը՝ խաղք ու խայտառակ,
Այլ բարք ու վարքի՝ անզուսպ կոպտուԹիւն
Խլեց ձեզանից՝ պատիւ, բարուԹիւն»։

Ր Ա Ֆ Ֆ Ի

*
* *

«Արևելքի» մէջ կարդում ենք հետևեալ լուրերը.

Ամեն. Խրիմեան Հայրիկ շաբաԹէ մ՛ի վեր անկողնոյ կը ծառայէ Գուզկունճուքի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն տան մէջ։ ՀիւանդուԹիւնն է պրոֆէսոր, որ Թեև վտանգաւոր բնուԹիւն մը չունի, այլ լուրջ խնամոց և բացարձակ հանգստուԹեան կը կարօտի։

Պատրիարքական փոխանորդ Գեր. Գէորգ Ծ. Վ. ԻւԹիւճեան երէկ այցելուԹիւն տուաւ Ամեն. Հայրիկին և Ն. ՍրբազնուԹեան որպիսուԹիւնն հարցուց ի դիմաց Ս. Պատրիարք Հօր։

—Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ ամենայն Հայոց Հայրապետ Վեհ. Տ. Տ. Մակար Կաթողիկոսի անուան տօնախմբուԹեան առԹիւ շնորհաւորական հեռագիր մ՛ուղղած էր Ն. ՎեհափառուԹեան։

Արդ, Վեհ. Հայրապետն՝ հեռագրաւ պատասխանե-

վաստաբանուԹիւնն ևս չանձն է առել իւր պատասխանի մէջ, չեշտելով մեզ „մաղաձ“ բառը, որի նշանակուԹիւնը իբր Թէ մենք չը հասկանալով, շփոԹել ենք մի այլ բառի հետ։ Շատ շնորհակալ կը լինէինք պարոնից, եԹէ նա շարունակէր իւր պաշտպանուԹիւնը, որով ցոյց առած կը լինէր իւր պատմական և աշխարհագրական հմտուԹիւնը։

**) Այդ բանաստեղծուԹիւնը առաջ աւելի խորհրդաւոր վերնագիր ունէր, որը փոխել է պ. Աղայեանցը։

լով Ամեն. Ս. Պատրիարք Հօր շնորհաւորութեանց, Իւր գոհունակութիւնն յայտնած և օրհնած է կենդրոնական Վարչութեան արդիւնաւոր ջանքերն և Թուրքիոյ համայն Հայ ժողովուրդը։

*
* *

Կ. Պոլսէց մեզ գրուած են.

«Այստեղ կը գտնուի ռուսահայ նշանաւոր երգչուհի Աննա Դարեալի Ղորղանեան և շատ լաւ ընդունելութիւն կը գտնէ բարձր շրջանաց մէջ. երեկ իրիկուն նուագահանդէս մը տուաւ ռուսական դեսպանատան մէջ ի նպաստ Սկիւտարի հրկիզելոց։ Նուագահանդէսն ընդունեցաւ ջերմ համակրութեամբ։ 5000 րուբլի հասոյթ գոյացաւ ի նպաստ այդ հրկիզելոց»։

*
* *

ՄԵԼՔԻՍԵԴԷԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Արտատպում ենք «Արևելքից» Զմիւռնիոյ առաջնորդի վերաբերմամբ հետևեալ տեղեկութիւնները։

«Զմիւռնիոյ գաւառական ընդհանուր ժողովն շաբաթ օր հեռագիր մը ուղղելով ի Պատրիարքարան կը ծանուցանէր, թէ թէեև իւր ուրբաթ աւուր նստին մէջ միաձայնութեամբ մերժած է տեղւոյն Ս. Առաջնորդի հրաժարականն, և յատուկ պատգամաւորութեան մը միջոցաւ խնդրած է Ն. Գերապատուութենէն որ ետ առնու զիւր հրաժարական, սակայն Ս. Առաջնորդը պնդած լինելով իւր հրաժարականին վրայ՝ գաւառական ժողովն յետ խորհրդակցութեան ընդուներ է Տ. Մելքիսեդէկ Եպիսկոպոսի հրաժարականը և որոշեր է յանձնարարել տեղւոյն Խառն ժողովին, որպէս զի առժամեայ տեղապահ մը կարգէ։ Գաւառական ժողովն ի վերջոյ կը խնդրէ Պատրիարքարանէն՝ առաջնորդական ընտրութեան հրահանգ և ընտրելեաց ցանկ մը ղրկել։

—

Եկեղեցական Պատգամաւորութիւն մը ներկայանալով այսօր Կրօնական ժողովոյն, կը մատուցանէ հետեւեալ հանրագիրը զոր ստորագրած են հինգ եպիսկոպոսք և վարդապետք և քահանայք.

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր, Նախագահ Ազգ. Վարչութեան Պատկ. Կրօնական Ժողովոյ.

Մայրաքաղաքիս եկեղեցական գործ գոհութեամբ կը տեսնէ որ Կեդր. Ազգ. Վարչութեան միակ ներկայացուցիչ մնացած Պատկ. Կրօն. Ժողովը, գիտակից իւր պաշտօնին պարտուց և իրաւանց, կը կրկնապատկէ իւր ժրաջան գործունէութիւն, որ եկեղեցին Հայոց ի Թուրքիա չ'ունեցաւ անիշխանութեան ներկայ ցաւալի պարագայից մէջ, յորս գժբաղդաբար զուրկ կը գտնուի Ամեն. Ս. Պատրիարքին նախագահութենէն և նորընտիր Քաղաքական Ժողովոյ աջակցութենէն։

Կենդրոնական իշխանութեան սոյն տագնապալից օրերուն մէջ, ցաւ է տեսնել, որ Զմիւռնոյ Գեր. Առաջնորդ Տ. Մելքիսեդէկ եպիսկոպոս, իւր հակազգային ընթացիք, կը նկրտի ազգային վերին իշխանութեան բարոյական ոյժը տկարացուցանել և ջլատել, ի մեծ դայթակղութիւն հաւատացելոց։

Եթէ նոյն իսկ եկեղեցւոյ հովիւ կարգեալ բարձրաստիճան պաշտօնեայք այս կերպով առ ոչինչ համարին կարգապահութեան և հնազանդութեան կանոնները և նոցա բարձրագոյն աւանդապահն հզոր կենդրոնական իշխանութիւն, քնաւ տարակոյս չկայ, թէ եկեղեցւոյ կազմակերպութիւնն պիտի եղծանի, առաջնորդութեանց կեդրոնի հետ ունեցած ներդաշնակութիւնը խանգարի, և Զմիւռնիոյ Գեր Առաջնորդին վնասակար օրինակն պիտի կարենայ ունենալ առ յապաղն իւր հեռաւորներ։

Սոյն վտանգներն նախատեսելով, Զմիւռնոյ ազգայնոց ողջամիտ մասն սկսած է արդէն յուզուիլ, գրգռութիւնք մուտ կը գործեն նոյն իսկ եկեղեցւոյ սրբավայրն. և քաղաքներ կը տեղան ընդդէմ եպերելի արարմանց առաջնորդին, որ անձնական նպատակներով և խոտելի դիտումներով կը յաւակնի պառակել եկեղեցւոյ միութիւնն և արհամարհել Պատրիարքաց և Համագումար Ժողովոյ կողմանէ տրուած ազգօգուտ որոշումներն, հակառակ իւր ստորագրութեան, որ պարտք կը դնէ իւր վրայ օրինակ լինիլ հնազանդութեամբ և խոնարհ հպատակութեամբ հայրենասէր կարգաւ Եկեղեցւոյ, յորում և եթէ կայացեալ է Ճշմարիտ վառք Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատարիմ պաշտօնէին։

Խորին վշտով զգածեալ եկեղեցական դասն որ ի մայրաքաղաքիս, տեսնելով ինքզինք զրկուած իւր սիրեցեալ Պատրիարքէն, որոյ հրաժարման պարագայներն առաւել ևս կը ծանրացուցնեն Զմիւռնիոյ Գեր. Առաջնորդին վարմունք, չէ կարող այլ ևս հանդուրժել որ եկեղեցական ոք պատճառ լինի ազգին յուզման, և կը դիմէ Ազգ. Վարչութեան Պատկ. Կրօնական Ժողովոյդ, խնդրելով յուզուիլն հրաւիրել Սրբազան Առաջնորդն Զմիւռնիոյ և վաղ ընդ փոյթ ձեռք առնուլ ազդուագոյն տնօրինութիւններ ի խափանումն չարեաց և ի պահպանութիւն միութեան եկեղեցւոյ։

Մնամք խորին մեծարանօք Ամեն.

Սրբազնութեանդ

Աստուածբնեան

Հինգ եպիսկոպոսաց և վաթսունէ աւելի վարդապետաց և քահանայից

Ի Կոստանդնուպոլիս 1 դեկտ. 1887

—

Լ. Հերըլդ հետևեալ կերպիւ կը ծանուցանէ Իզմիր Գեր. Առաջնորդին հրաժարումն։

«Իզմիրի Հայոց առաջնորդ Մելքիսեդեկ եպիսկոպոս հրաժարական տուած է, անցեալ կիւրակէ օր քաղաքին եկեղեցւոյն մէջ ժողովրդեան կողմէ իրեն դէմ եղած ցոյցի մը պատճառաւ։ Կըսուի թէ այդ եպիսկոպոսը Եկեղեցւոյ կանոնաց հակառակ շարժեր է, ի մէջ այլոց հանել տալով տեղւոյն ազգային գերեզմանատան մէկ մասին ոսկորտիքը, որպէս զի շէնքեր շինուին անդ։ Գում-Գաբուի Պատրիարքարանը մտադիր է համար պահանջել Մելքիսեդէկ եպիսկոպոսէ իւր այս ընթացքին համար»։

*
* *

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

III Թիֆլիսի նահանգ

Բօրչալուի [1]) գաւառի 98 արքունական գիւղերից զուտ հայկական են 45-ը, իսկ խառն հայերը ապրում են—վրացիների հետ 1 և յոյների հետ 2 գիւղերում: Հայոց գիւղօրայքը գլխաւորապէս զետեղված են գաւառի Լօռի և Ծալկա կոչուած մասերում:

Ըստ 85 թուականի հետազօտութեան, Բօրչալուի գաւառի արքունական գիւղացիների թիւն է 5327 ծ., 23816 հ. ա. ս. և 21260 հ. ի. ս. ընդամենը՝ 45076 հոգի. իսկ հայերի թիւն է 2582 ծ., 12436 հ. ա. ս. և 10655 հ. ի. ս. ընդամենը՝ 22091 հոգի: Այսպէս՝ հայերը կազմում են արքունական գիւղացիների 51,25-րդ տոկոսիքը:

Հայերի աճումը 22 տարվայ ընթացքում (73 թ. մինչ 85 թ.) արտայայտվում է հետևեալ դրական զուտ թուերով՝ 601 ծ., 2878 հ. ա. ս. և 2369 հ. ի. ս., ընդամենը՝ 5247 հոգի:

«Բօրչալուի գաւառի հայ ազգաբնակութիւնը,—գրում է պ. Երիցեանը,—ըստ ժամանակի՝ բաղկացած է զանազան շերտերից: Իբրև հնագոյն բնակիչներ պէտք է համարել այն գիւղերի ժողովուրդը, որոնք դասաւորված են Դեբեդա գետի կիրճում: Լօռու դաշտում, գլխաւորապէս, Ջալալ-օղլի գիւղի շրջակայքում, հաստատվել են ներկայ դարիս առաջին թուականներում գաղթականները Աբարանից (Նոյմիածնի գաւ.), Փամբակից (Ալէքսանդրօպօլի գաւ.) և նախկին Երևանեան խանութեան այլ գաւառներից: Ծալկայի հայերը յայտնվել են այստեղ 30-ական թուականների սկզբում Էրզրումի շրջակայքից: Վերջապէս, Բօլնիսեան և այլ հայերը, որոնք բռնած են Մաշավեր գետի և Խրամի միւս ճիւղերի կիրճերը, կազմում են յետնորդները զարաբաղեան այն գաղթականների, որոնց հրաւիրել և բնակեցրել են այստեղ վրաց վերջին Հերակլ և Գէօրգիյ թագաւորները: Այդ (հայնական) տարրը, որը կազմում է գաւառի 98 արքունական գիւղերի բնակչութեան կէսից աւելին, բռնում է, քիչ բացառութիւններով, առողջ լեռնական տեղեր և, չը նայելով բարերը հողերի պակասութեան, արտայայտում է նշանաւոր ընդունակութիւն աճելու: Տասներկու տարում երկու սեռի հոգիների աճումը հաւասար է 29,40%, որը մի տարում կազմում է 2,45%: Այսպիսի անչափաւոր աճումը բացատրվում է ամենից առաւել արտաքուստ, մանաւանդ, Ղազախի և Ախալքալաքանդրօպօլի գաւառներից եկող հայերի մշտական հոսանքով: Սրինակ, Ջալալ-օղլի հայ գիւղում 1873 թ. համարվում էր 107 ծ. և 877 հոգի երկու սեռ. այժմ ծուխերի թիւը նորանում բարձրացել է 232-ի իսկ հոգիների թիւը հասել է 1630-ի. ընդամենը 106 ծ., կամ 647 հոգի, համարվում են անհող: Այս հանգամանքը բացատրվում է նորանով, որ 15 տարի սորանից առաջ ոստիկանութիւնը ենթադրում է այս գիւղը վերափոխել գաւառական քաղաքի, բայց արգելք էր գտնում բնակչութեան սակաւաթուութեան մէջ: Ջալալ-օղլեցիները աշխատել են հեռացնել այս պակասութիւնը վերջին 12 տարվայ ընթացքում, անարգել ընդունելով բոլոր ցանկացողներին, բնակեցնելով իրանց գիւղում և տնատեղը տալով, առանց վերստուգելու բնակուղների իրաւունքները և ծագումը. . . Վեց-եօթ գիւղերում հաշվում են երկու տասնեակ գաղթականներ Թիֆլիսից և այլ քաղաքներից, որոնք առայժմ պարապում են արհեստներով. . . Մի խօսքով այստեղի հայկական բնակչութեան անչափաւոր աճմանը, գլխաւորապէս, նպաստել է գաղթականների արհեստական հոսանքը»:

Բօրչալու գաւառի հայերը բացառապէս լուսաւորչականներ են և խօսում են հայերէն:

Հարկաւոր է նկատել, որ Բօրչալուի գաւառի Ծալկա մասնում, Թամալա գիւղում ապրում են 11 ծուխ. 30 հ. ա. ս. և 45 հ. ի. ս. ընդամենը 75 հոգի—բօշաներ: Պ. Երիցեանը ասում է, որ «նոքա գաղթականներ են Էրզրումի շրջակայքից, դաւանում են հայ-լուսաւորչականութիւն և խօսում են հայերէն, բայց շատերը գիտեն և առանձին բօշայական լեզու»:

Յիշելու արժանի է, որ «մի քանի գիւղում Ծալկայի յոյների մայրենի լեզուն համարվում է հայոց անատօլեան բարբառը և, ըստ նոցա մէջ սովհալանուած աւանդութեան, նոքա իրանց համարում են դեռ Թիւրքիայում եղած ժամանակ ուղղափառութիւն ընդունած հայեր»:

Թիֆլիսի նահանգի 941 արքունական գիւղերից հայկական են 101-ը, բացի այդ՝ հայ գիւղացիները ապրում են խառն զանազան ազգերի հետ 66 գիւղում: Զուտ հայկական գիւղերի թիւը կազմում է 10,65-րդ տոկոսիքը արքունական գիւղերի:

Հայ գիւղացիների թիւն է.

Ըստ 73 թ. աշխարագրի [1])

6565 ծ. 29473 հ. ա. ս. և 25959 հ. ա. ս. ընդ. 55422

Ըստ 85 թ. հետազօտութեան

8378 ծ. 36303 հ. ա. ս. 31800 ի. ս. 68103

Այսինքն, հայերը կազմում են նահանգի արքունական գիւղացիների 22,03-րդ տոկոսիքը:

Հայերի աճումը 12 տարուայ ընթացքում արտայայտվում է հետևեալ դրական զուտ և տոկոսիքական թուերով.—

1813 ծ. 6840 հ. ա. ս. և 5841 հ. ի. ս. ընդ. 12681 հ.

29,14% 23,22 22,50% 22,70%

Մի տարուայ աճումը հաւասար է.—

2,43% 1,94% 1,88% 1,89%

[1]) Բօրչալուի գաւառի հետազօտութիւնը, պ. Ա. Պ. Երիցեանի, զետեղուած է „Նիւթերի“ VII րդ հատ. Բ-րդ մասում:

[1]) Այս քանակութիւնների մէջ են և բօշաների թուերը:

Այս թուերը ցոյց են տալիս Թիֆլիսի նահանգի գիւղացիների աճման կանոնաւորութիւնը։

Ըստ դաւանութեան նահանգի հայերը բաժանվում են. Լուսաւորչականների՝

7675 ծ. 33078 հ. ա. ս. 28811 հ. ի. ս. ընդ. 61889 հ.

Կաթոլիկների՝

703 ծ. 3225 հ. ա. ս. 2989 հ. ի. ս. ընդ. 6214 հ.

Ն. Աբէղեան

ՄԱՆԿԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՏԻԺ

(Մի բանախօսութիւն)

Յարգելի Պարոննե՛ր.

Թէև կը կամենայի վերոյիշեալ խնդիրն արծարծել, մի ամփոփ հայեացք ձգելով նորա վերայ, որպէս զի յարգելի ունկնդիրները կարողանան դիւրութիւնով մի որոշեալ գաղափար կազմել այդ խնդրի մասին, սակայն պէտք է անշուշտ աչքի առաջ ունենալ մի լրագրական յօդուածի նեղ շրջանակն ու խնդրի մեծ ծաւալն. ուստի խնդրում եմ նեղդողամիտ գտնուել, եթէ այս աշխատութիւնն իւր բոլոր մասներով կատարեալ չերևի։

Նախ կարևոր եմ համարում որոշել մանկավարժական պատիժ տեղը թէ՛ դաստիարակութեան և թէ՛ այն գիտութեան մէջ, որ ուսումնասիրում է դաստիարակութիւնն, այն է՝ մանկավարժութեան մէջ։

Դժբաղդաբար սակաւած եմ ապացուցանելու մեր հասարակութեան, որ մանկավարժութիւնն էլ գիտութիւն է, որովհետև կարող են գտնուել մանկավարժական ասպարիզում գործող թէ՛ մասնմատեհոնները, թէ՛ իրաւաբանները և թէ, մինչև անգամ, արհեստագործները, որոնք կասեն թէ՝ մանկավարժութիւնը մի որ և է ազգի լմաստասիրութիւն (Pedanterie) է կամ ամենևին գիտութիւն չէ։

Պարզ է, որ գիտութիւնն է տրամաբանական գաղափարների մշակումն ու հաւաքածուն. որնիսկ՝ մասնմասիկան է մեծութեան և թուերին վերաբերեալ տրամաբանական գաղափարներից կազմուած մի ամբողջութիւն։ Բոլոր գիտութիւնների հիմքն է փորձն ու մտածողութիւնը. իսկ փորձն է իսկզբանից տուած գաղափարների յատկութիւններ։ Տուած է մեզ արտաքին զանազան տպաւորութիւնների ահագին քանակութիւն, որ զգայարանների՝ հոգւոյ կամուրջների միջոցով՝ հաղորդում են գիտակցութեան. ինչպէս զանազան գոյների, ձայնի, հոտի, ճաշակի և շոշափման տպաւորութիւնները։ Այս տպաւորութիւնների միջոցով իրական աշխարհն հաստատվում է մեր գիտակցութեան հիմքի վրայ, որ սկզբնականապէս որպէս մի մաքուր թուղթ (Tabula rasa) արտաքին աշխարհից ստացած տպաւորութիւնների հաւաքածուն ընդունում է իւր մէջ, սակաւ առ սակաւ մշակում է և գաղափարներ դարձնում։

Այդեօք մանկավարժութիւնն համապատասխանո՞ւմ է վերոյիշեալ պահանջին։—Այս դէպքում իրաքանչիւրը դրական պատասխան կը տայ։—Մանկավարժութիւնն ևս գիտութիւն է, որովհետև նա ևս ազգակից է, համասեռ գաղափարների հաւաքածու է։ Շատերը, նոյն իսկ յայտնի անձնաւորութիւնները, գիտութիւնից բոլորովին զուրկ լինելով՝ չեն ընդունում մանկավարժութեան գիտութիւն լինելը. քայց տգէտների արտայայտութեան ուշադրութիւն դարձնել՝ նշանակում է քամիով ջուր կրել։ Կան և հեղինակութիւններ, որոնք մանկավարժութիւնը գիտութիւն չեն համարում, աչքի առաջ ունենալով այն փաստը, թէ՝ մանկավարժութիւնն հիմնուած է ենթադրութիւնների վերայ։ Իսկ մենք հարցնենք այդպիսիներին. արդեօք ոչ գիտութեան հիմքը չէ ենթադրական. միայն մասնմասիկան է, որ իւր համար կազմում է մի որոշ ու պարզ ամբողջութիւն։ Աստեղագիտութիւնը, իրաւաբանութիւնը, բժշկականութիւնը և այլն, բոլորն էլ ենթադրական հիմունք ունին. նոյն իսկ բժշկականութիւնն, որպէս գիտութիւն՝ եղեգնի նման տատանվում է։

Պարոննե՛ր, քանի որ մարդկային մտածողութիւնն ենթադրական է, հետևաբար գիտութիւններն էլ ոչ մի ժամանակ չեն կարող ազատուել ենթադրութիւններից։

Շատերն ևս այս խնդրին փորձնական տեսակէտից են քննում. „մանկավարժութեան բոլոր միջոցներն էլ չեն աշխատում, ասում են նրանք, չեն ունենում խոստացած հետևանքն ու արդիւնքը“։ Բայց թող մարդ հարցնէ. Արդեօք բժշկականութեան բոլոր միջոցներն էլ ազդում են. նա կը պատասխանի. ոչ։ Ուրեմն ինչո՞ւ պէտք է նա գիտութիւն լինի. իսկ մանկավարժութիւնը—ոչ։

Մանկավարժութիւնն է գիտութիւն և արուեստ։

Եթէ մանկավարժութիւնը մշակուած սկզբունքների հաւաքածու է, ապա նա գիտութիւն է. իսկ եթէ փորձերի—արուեստ։

Դաստիարակութիւնն, որպէս գիտութիւն՝ ունի հետևեալ նպատակն. կրթել, մանուկներից ստեղծել բարոյական—կրօնական քնաւորութիւններ. այդ նպատակն որոշում են բարոյական ու կրօնի վիճաբանութիւնները. իսկ Ճանապարհը, միջոցը—հոգեբանութիւնն։

Մանկավարժութեան մասերը երեքն են՝ դաստիարակութիւն, դաստիարակութիւն ու կառավարութիւն։

Առաջինն օգնում է նպատակին նորանով, որ մշակում է աշակերտի մտաւոր շրջանն, որով միջնորդապէս ազդում է աշակերտի կամքի վերայ, իսկ երկրորդն՝—անմիջապէս աշակերտի զգացմանց և կամեցողութեան վերայ։

Այս երկուսից իւրաքանչիւրն իւր նպատակին հասնելու համար դիմում է օժանդակիչ միջոցների, որոնց հաւաքածուն կոչվում է կառավարութիւն կամ, մի մանկավարժի խօսքերով ասած, մանկավարժական ոտանկանութիւն։ Սա չէ ազդում ուղղակի աշակերտի բնաւորութեան զարգացման վերայ, այլ տալիս է այն միջոցներն, որոնցով որբում, մաքրվում են արգելքներն, որպէս զի դաստիարակութեան գործը կարողանայ ուրիշ Ճիշդ յառաջ ընթանալ. կարճ ասած. այդ վերջինն աշխատում է, որ դաստիարակութիւնը կարելի դարձնել։ Սոքա այն միջոցներն են, որոնք ուզում են մանկան անկարգութիւնները ու զանցառութիւնները վերացնել, որպէս զի դաստիարակութիւնը կարողանայ Ճշտութիւնով յառաջ գնալ։—

Ուր կայ շրջան, ուր կայ մի հաւաքական անձնաւորութիւն, ուր „ես“ է „մենք“ գաղափարի մի անդամ և ուր իւրաքանչիւրն ենթադրվում է ընդհանրութեան, այնտեղ պէտք է լինի և կառավարութիւն։ Դպրոցն էլ որոշ սահմանների մէջ գտնուող մի շրջան, մի հաւաքական անձնաւորութիւն է, ուստի և այնտեղ պէտք է լինի կառավարութիւն։ Իրաքանչիւր կառավարութիւն պէտք է ունենայ իւր որոշ կարգապահութիւնն (disciplin) ու օրէնքները, որպէս զի ընդհանրութեան կամքին, այսինքն՝ կարգապահութեան օրէնքներին չ'ենթարկուողը պատժուի, ինչպէս պատժվում

է յանցաւորը քաղաքական դատաւորի ձեռքով և ոտիկանական կարգապահական օրէնքներով: Կենդանի կարգապահութիւնը դպրոցական կեանքի առաջին պայմանն է. այդ վարչութեան առաջին միջոցն է անգամներին զգուշացնել և շրջանի կառավարչի բարոյական ազդեցութիւնը պահպանել: Իւրաքանչիւր ուսումնարանում, ուր կրթվում են բազմաթիւ մանուկներ, ուր երեխայութեան անխոհականութեան, կոպիտ բնաւորութեան տեմպերամենտների մեծ տարբերութիւնը չէ յաղթում բարոյական ազդեցութիւնն ու զգուշացնելն, այնտեղ պէտք է գործածել ոտիկանական խստութիւն: Մի որ և իցէ դպրոցի ամենամեծ անբաղդութիւնն է վարչութեան լաւ լինել չը:

Անտարակոյս է, որ բարոյական ազդեցութիւնը միշտ պէտք է նախընթաց լինի ոտիկանական վարչութեան. բայց բարոյական ազդեցութիւնից և ոտիկանական վարչութիւնից՝ կարգապահութեան միջոցներից ամենադլխաւորն է աշակերտներին կանոնաւոր կերպով զբաղեցնելն, որովհետև, ինչպէս ամենքին յայտնի է, «յանդուգն թենիս ծնանին ամենայն չարիք»:

Ամեն օրէնք անգործադրելի կը մնայ, եթէ ճշմարիտ հսկողութիւն չը լինի. Ահաւասիկ այդ ուղիղ հսկողութիւնն է, որ պահանջում ենք ուսուցչից. նա ինքն է դատաւոր օրէնսդիրը, դատաւորն ու գործադրող վարչութիւնը. նա պէտք է իշխէ նաև դատաւորի վերայ այնպիսի հեղինակութիւնով, որ եթէ ինքը դատաւորը չը լինի, աշակերտները զգան նորա ներկայութիւնը: Շատ յաճախ է պատահում, որ աշակերտներն ուսուցչի ներկայութեան ժամանակ և կարգապահութեանից սահմաններից անցնում և ամեն տեսակ վանդալութիւններ են գործում. ուրեմն ոչ թէ օրէնքն է դպրոց կառավարողն, այլ ուսուցչի հեղինակութիւնը: Ուսուցիչը պէտք է ներկայանայ երբեք մի ընդհանուր հրամանատար, որին ոչ մի դիմաւոր չի կարող ընդդիմանալ. նորա կանգնած տեղն անգամ պէտք է որոշ լինի, որպէս զի բոլոր աշակերտներն իրանց աչքերը մի որոշ կէտի վերայ յառնեն և այնտեղից ընդունեն ամենայն ուսուցումն: Սխալ չէ ասում դատական այն խօսքը թէ. «ամենալաւ ուսուցչն ամենալաւ կարգապահն է»:

Եթէ մեր աշակերտները դասի ժամանակ անուշադիր են, անկարգապահ են և կամ, ինչպէս ընդհանուր խօսքով ասում են, չարաճճի են անում, արձակ ժամանակ անվայել խաղերով են զբաղվում և անվայել խօսքեր են քաց թողնում իրանց բերանից, այդ բոլորի պատճառը հետաքրքրական պարապմունքների բացարձակ բացակայութիւնն է. եթէ ուսուցման նիւթը աշակերտին հետաքրքրական է, եթէ արձակ ժամանակ նա մի հետաքրքրական ու վայելուչ խաղով զբաղուած լինի, որ օգնէ նորա մարմնոյ կազդուրութեանը, ինչու պէտք է նա դասատան մէջ անուշադիր լինի կամ դուրսը իրան անվայել պահէ: Ի՞նչ միտք ունի մեր ասածներից չետոյ մեղադրել կարգապահ վերակացուներին, թէ նորա լաւ չեն հսկում աշակերտների վերայ: Աչքի առաջ ունենալով մեր չլուսած այն սկզբունքն, որ պարապութիւնից են ծնվում ամենայն չարիք, կարող ենք ապահով լինել, որ աշակերտները կարգապահ կը լինին, եթէ իւրաքանչիւր աշակերտի վերայ մի վերակացու նշանակենք և եթէ վերակացուները բարեխիղճ լինին:

Վերակացուն ինչպէս հսկէ կարգապահութեան վերայ, երբ ուսումնարանում հինգ հարիւր աշակերտ ամբողջ կէս ժամ դասերից ազատ պէտք է խաղով զբաղուին. բայց ահա այն զբաղեցնող և հետաքրքրական խաղն, որ իւրաքանչիւր ուսումնարան իրեն հոգուց և մարմնոյ մարզարան՝ պէտք է ունենայ. Ո՞ւր է մարմնամարզութիւնը: Նայեցէք մեր բոլոր աշակերտանոցների կռնակներին, ամենքն էլ կոր են, նայեցէք նոցա՝ քայլերին, նոքա մանգալ չը պիտեն: Աչքեցէք ուսումնարանի նպատակն է պատրաստել ֆիզիքապէս և հոգեպէս տակաւ մի սերունդ:—

Մենք թուեցինք վարժապետի հեղինակութիւն, որ հասկանալի է, առանց վոխադարձ սիրոյ չէ կարող գոյութիւն ունենալ և որի վերայ մենք երկար չը խօսեցինք, իբրև հասկանողի:

Խօսեցինք նոյնպէս կարգապահութեան ամենադլխաւոր միջոցի այն է՝ դասատան մէջ հետաքրքրող դասաւանդութեան, դասատանից դուրս վայելուչ և մարմնոյ առողջութեան համար անհրաժեշտ խաղերի մասին, որոնք աշակերտի ուսումնարանում եղած ժամանակի մեծ մասը լրելով՝ քիչ միջոց են թողնում նորան զանցառութիւն անելու: Ահա այս քիչ ժամանակի մէջ գործած յանցանքների համար կայ մի երրորդ և վերջին միջոց՝ այն է՝ ոտիկանական վարչութիւն:

Ոտիկանական վարչութեան միջոցն է՝ պատիժ: Երբ աշակերտը պատժվում է, պէտք է զգայ, որ ինքն իբրև պարտականական շրջանի անդամ, պէտք է ենթարկուի կառավարութեան օրէնքներին: Բայց պատժից առաջ պէտք է աշակերտին նախապատրաստել, այսինքն՝ նկատել, որ նա կարող է ենթարկուել պատժի. եթէ այդ չ'օգնեց, այն ժամանակ պատժի պէտք է հրամայական եղանակով տեղն ունենայ: Կառավարութեան այդ միջոցն, այն է՝ պատժի հրամայական եղանակով և օրէնքով լինելու նոյն մարքով առում է և լատինական առածը. nulla pocna sine lege« կամ մի ուրիշ. »nullum crimen sine lege«, Ուսուցիչը պատժելուց, կառավարութեան ոյժը իրագործելուց չ'ստոյ, պէտք է իրան ցոյց տայ թէ ամեն ինչ մոռացուած է: Աշակերտին չը պէտք է թողնել երկար նկատման տակ և ոչ էլ երկարատև արտայայտութիւն ցոյց տալ. ոտկայն պատեհարակը չը պէտք է պատժուած աշակերտին երկար ժամանակ իւր ուշադրութեից զրկի: Կառավարութիւնը մնայն ուզում է, որ աշակերտն զգայ այն ծանրութիւնը, որ շրջանը դնում է իւր անդամների վերայ: Այդ արդէն պատահել է. պատիժն անցել է, ուսուցչի և աշակերտի ունեցած անցեալ յարաբերութիւնները պէտք է կրկին վերականգնուին: Մի խօսքով պատիժը տալուց չետոյ, պէտք է յանցանքը մոռացութեան տալ, որպէս զի աշակերտն համոզուի, որ պատիժ կրելով ապաշխարել է իւր յանցանքն և ոչ թէ դայ այն համոզման, ինչպէս առհասարակ լինում է, թէ եթէ վարժապետը չարամտութիւնով և ատելութիւնով չէ պատժում նորան, այլ ինչո՞ նորա համար, որ ինքը զանցառու է եղել. ուստի կարևոր է, որ նախ աշակերտը ծանօթ լինի դպրոցական բոլոր օրէնքներին, որոնց ինքը պարտաւոր է երթարկուել և այն պատիժներին, որոնք նշանակուած են իւրաքանչիւր զանցառութեան համար: Այս նպատակին իրագործելու համար անհրաժեշտ է, որ դասարաններում կախուած լինին կարգապահական օրէնքներն ու դրա չ'ենթարկուողի պատիժների ստիճանները՝ կամ թէ ուղղակի տպուած յանձնել աշակերտներին:

Պատիժը մանկավարժական կառավարութեան ազդու և վստահաւոր զէնքերից մէկը լինելով, դաստիարակը պէտք է ոտկաւ գործադրէ և գործադրութեան ժամանակն էլ նախ իւր խոհականութեան նեղ շրջանի: Ընդհանրապէս պատիժն է զանցառութեան տհաճ հետևանքն, որ կարող է լինել բնական և արհեստական: Ով ծանկամիտ ուսումնասիրէ, նորա բնական պատիժն է ստե-

ատելութիւնն. իսկ ստախօսին հաւատալ չ'ընծայելն է նորա բնական պատիժը։

Պատժի չափն ըստ կարի պէտք է համապատասխան լինի, այսինքն՝ ոչ աւելի և ոչ պակաս. անկրաւացի պատիժները փակում են այն բարոյական յարաբերութիւնները, որոնք տեղի ունեն ուսուցչի և աշակերտների մէջ։

Պարոննե՛ր, ահա ասիկ այս դէպքն է պատճառ, որ մեր ուսումնարաններից շատերում աշակերտների և ուսուցիչների մէջ գոնուած բարոյական յարաբերութիւնը քակուած է։

Այն պատիժները ունին առաւելութիւն, որոնք աշակերտի բնական վարմանց հետևանքին աւելի մօտիկ են, օրինակ՝ ծոյլից խլել հանգստութեան ժամանակին ու տալ աշխատասիրներին. ճշմարիտ խօսողի ամեն մի խօսքին հաւատ ընծայել. իսկ ստախօսի—ոչ մի խօսքին։

Աշակերտներին պատժելու ժամանակ չը պէտք է ուշադրութիւն դարձնել պատժուողի արտաքին վարմունքի, այլ ներքին սկզբնապատճառի վերայ, ապա թէ ոչ աշակերտի ներքինն ու արտաքինը կը սկսեն տարբերուել միմիանցից։

Պատիժը զանազան ազդեցութիւն է ունենում իւրաքանչիւրի վերայ։ Մի քանիսի վերայ նոյն իսկ ուսուցչի նկատողութիւնն աւելի է ազդում, քան մանկավարժական պատիժն ուրիշների վերայ։ Մի և նոյն պատիժն, որ մէկի համար արդիւնաբեր է լինում, միւսի համար նոյն արդիւնքը չէ ցոյց տալիս։ Նոյն մէջոցն ստոր դասատան աշակերտին այլ կերպիւ է ազդում, իսկ բարձր դասատան աշակերտներին այլ կերպ. այն պատիժն, որ առաջ լաւ հետևանքի էր հասցնում, յետոյ նոյն ազդու հետևանքներն չառաջ չի բերում. հետևաբար պէտք է որոշել իւրաքանչիւր պատժի չափն պատժուողի անհատականութիւնով։ Թողէք, դաստիարակները, ձեր աչքից աշակերտի անհատականութիւնն (Individualitait) և կը տեսնէք, որ ձեր նշանակած պատիժների մէջ բացակայ է նոցա չափը։

Պէտք է անպայման մերժել այն պատիժն, որ կարող է վնասել աշակերտին հոգեպէս և մարմնապէս։ Իւրաքանչիւր վնասաբեր պատիժ մեղա չափազանց է։ Այս դէպքում դաստիարակը պէտք է աչքի առաջ ունենայ այն հետևանքները, որոնք մեծ գանձ են աշակերտի առողջութեան շըրջանի համար։

Առհասարակ ոչ մի ժամանակ ուսուցիչը չը պէտք է պատժի աշակերտներին, եթէ նա բարկացած է և կրքոտ է գործում, այլ Թողնի մինչև իր կրքի և բարկութեան հանդարտուելն, որպէս զի պատիժը խոհականութեան արտայայտութիւն լինի։ Պարզ է, որ ուսուցիչը կրքի և բարկութեան ներքոյ դժուար կը քննէ աշակերտի յանցանքն, որովհետև նորան զեկավարողն արդար դատողութիւնը չէ, այլ կիրքն ու բարկութիւնը։ Ուսուցիչը պէտք է նայէ աշակերտի բարոյական թուլութիւնների վերայ այնպէս, ինչպէս բժիշկը մարմնական թուլութիւնների վերայ, երբեմն Թոյլ և տկար բնութեան օրէնքները։ Բժիշկը չէ զրկում հիւանդներին, այլ աշխատում է նոցա ուղղել, ուսուցիչն և պէտք է նոյնն անի։

Դասատուութեան ժամանակ չը պէտք է տեղի ունենայ ոչ մի պատիժ, որովհետև դրանով առաջին դասն ընդհատւում է, երկրորդ՝ աշակերտների մտապատկերների շարքն Թեզը կտրում ենք և ապա ստիպուած ենք լինում գժուարութիւնով մտապատկերներն ի գլուխ բերել դասատուութեան նիւթի համար։ Ուստի դասատուութեան ժամանակ վարուելու միակ մէջոցն հետևեալն է. պանցառուաշակերտի ազգանունն գլխատառը գրել գրատախտակի անկիւնում և դասից յետոյ նոյն աշակերտին հարցնել նորա նշանակութիւնը։ Աշակերտն այդ դէպքը կը հասկանայ՝ որովհետև հոգեբանօրէն մեզ յայտնի է, որ միաժամանակ պատահած դէպքերը կարող են մէկը միւսին վեր արտացոլել. այսինքն՝ մեր գիտակցութեան մէջ միաժամանակ եղած մտապատկերներից մէկն ի գիտակցութիւն գալով բերում է իւր հետ և միւսին։ Դասը վերջանալուց յետոյ, նոյն աշակերտին չիշել տալ և պահանջել, որ իւր գործած յանցանքն իւր ընկերների առջև խոստովանուի, այնուհետև նշանակել այն պատիժը, որ հարկաւոր Ը կամ աշխատել ուսուցչի հեղինակութիւնով ու սիրով ազդել աշակերտի ծուռ ճաշող կամքի վրայ։ Վերջացնելով ընդհանրապէս այն կարևոր հանգամանքների մասին խօսելս, որոնք իւրաքանչիւր դաստիարակ պատժելու ժամանակ պէտք է աչքի առաջ ունենայ, մնում է յիշել, որ բոլոր պատիժները մանկավարժական դերեր են. ուստի դաստիարակը պատժելիս պէտք է մարդասիրաբար (human) վարուի։

Թուեցինք, որ նախապատրաստութիւնը պէտք է նախընթաց լինի պատժին և, որ պատիժը պէտք է հրամայողական եղանակով ու օրէնքներով տեղի ունենայ, խօսեցինք նոյնպէս բնական և արհեստական պատժի մասին։ Առաջին մի քանի տեսակները Թուելուց յետոյ, աչքը առաջ առնենք այն հանգամանքները, որոնց մասին իւրաքանչիւր դաստիարակ պատժից առաջ պէտք է մտածէ։ Այդ հանգամանքներն են այն, որ պատժողը պէտք է գտնի յանցաւորի գործած յանցանքի սկզբնապատճառն, որպէս պատժի չափն աշակերտի անհատականութիւնով, Թույլ չը տայ մարմնական պատիժները, սկզբունքով չը ընդունել, որ ուսուցիչը կրքի և բարկութեան ներքոյ դատի աշակերտի յանցանքը։ Այժմ դառնանք պատիժների գլխաւոր տեսակներին ու քննենք նոցանից իւրաքանչիւրը Թէ՝ արդեօք սկզբունքով նոցանից որը կարելի է ընդունել կամ չ'ընդունել։

Նախ աշակերտի համար ամենաբնական պատիժն ուսուցչի անբաւականութիւնն է, որ նա ցոյց է տալիս, արտայայտելով դէմքի և հայեացքի մէջոցաւ. սակայն աշակերտին ծաղրել, վատ խօսքեր ասել *), ուսուցչի կողմից ոչ Թէ անվայել, այլ և կատարեալ բարբարոսութիւն է. հետևաբար դոքա չեն կարող պատիժ համարուել։ Նոյնպէս դասարանում և Թէ դասարանից դուրս չոքացնելն, ամենայն մի չնչին դէպքում դասատնից դուրս վռնտելն, մեքենայաբար—անմտածողութեամբ զբաղեցնելը—դաստիարակական պատիժներ չեն։ Աշակերտին ուսումնարանում ամբողջ օրով փակած պահել, առաջուայ խօսքերի վերայ հիմնուելով՝ անընդունելի է. իսկ մանկավարժական նշանակութիւն կարող է ունենալ այն դէպքում, երբ ուսուցիչն ինքն էլ աշակերտի հետ ուսումնարանում կը մնայ և միասին բարոյապէս ազդել նորա վերայ։ Մի խօսքով իւրաքանչիւր պատիժ պէտք է աչքի առաջ ունենայ միայն դործած զանցառութեան անմիջապէս ուղղելն և ոչ Թէ նոր զանցառութիւնների դուռ բանալ—օրինակ՝ երեք ժամ անգործ և առանց հսկողութեան Թողնել։

Ազդու պատիժներից մէկն է՝ խլել աշակերտից նորա ազատութիւնը։ Մարդ պէտք է արտաքին աշխարհից որոշ գրգիռներ ստանայ, որպէս զի աւելի տայ մտապատկերների վիվիսեկտելուն, եթէ հոգեկան շարժումն պէտք է տեղի ունենայ, որպէս մարդկային վեհանքի ուրախութիւնների հիմնական պայման։ Առանց նոր գրգիռների մեր հոգին կը

*) Ինչպէս՝ լիմար, հշ, Փարիզի կենդանաբանական այգու կապիկ, Թուլութիչ, փինաչի, քրէհած հշ, մշադի, Թիֆլիզի կինտօ, паресенокъ, свинья, идіотъ.

գանուի մի տեսակ անգամ հանգստութեան մէջ։ Աշակերտին ընթացատող տեղի մնակոդմանի լինելն ու ընթանի պատասխանը կարող են մեծ ազդեցութիւն ունենալ նորա վերայ։

Նոյնպէս ազգու մինչոց է աշակերտներին հեռացնել իրանց սովորական ընթանից։ Պարզ է, որ երբ մի մարդ իր սովորական ընթանից հեռանում և մի ուրիշ ընթանի մէջ է ընկնում, մի առանձին տպաւորութիւն է տեսնում նորան։

Վարչութեան մինչոցներից մինն է նաև երբեմն ծնողների հեղինակութեան դիմելը, պատժի աստիճանն ու տեսակն որոշելն և ծնողների գործադրութեան յանձնելն։

Մարմնական պատիժն, այն է՝ ծեծը սկզբունքով ընդունել չի կարելի, աչքի առաջ ունենալով վերոյիշեալ խօսքերը, այն է՝ որ նա կարող է աշակերտի առողջութեան վնասել, սակայն մինչ կարող են տեղի ունենալ բացառութիւններ այս և այն հանգամանքներում, երբ մարմնական պատիժը չի վնասիլ աշակերտին։ Այս պատիժների մէջ ամենավերջինն աստիճանն է. ուստի և բոլոր վարչական մինջոցներից յետոյ պէտք է գործադրել, այն է բացառիկ դէպքերում ամենայն զգուշութեամբ. (գրեթէ նոյն մտքով ասում է հայկական առածն „որ ոչ լսցէ ունկամբ՝ լսիցէ թիկամբ“)։

Մարմնական պատիժների ժամանակ չը պէտք է յանցաւոր աշակերտին իր ընկերի առջև, այլ ծածուկ և նոցա բացակայութեան ժամանակ, պատժել, որպէս զի աշակերտի պատուոյ զգացմունքները վնաս չը կրեն։ Ինչ վերաբերում է աշակերտին ուսումնարանից արտաքսելուն, պէտք է այդ մինջոցը գործադրել շատ սակաւ և զգուշ, որ հետևեալ երկու նպատակով կարող է տեղի ունենալ, առաջին որ վար չութիւնը չունի աշակերտին ուղղելու այլևս ուրիշ մինջոց. ուսումնարանից արտաքսելն այն նպատակին պէտք է ծառայէ, որ աշակերտի անչափ զանցառութիւնների բոլոր առիթները վերցնուին, ձգելով նորան մի ուրիշ շրջանի մէջ, որպէս զի փչացած մտաւոր շրջանը գիտակցութեան սահմանից դուրս գայ և ընկնի հոգուոյ անդունդն, ուրիշ խօսքերով ասած՝ նորա մտաւոր շրջանը մոռացութեան գրուի. երկրորդ՝ աշակերտի ուսումնարանից արձակելն այն նպատակով է լինում, որ նա այն ամբողջութեան, որին պատկանում է, չը վարակէ։ Մարդ կտրում է առողջ մարմնից մի փչացած անդամ, որպէս զի մարմնոյ միւս անդամներն ևս չը վարակուին, ինչպէս խրատում է և առաքը գիրքը. „Եթէ աչն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա դնա և ընկեա ի քէնէ“։ (Մատթ. Ե. գլ. 20)։ Այս հանգամանքում աշակերտի արձակելն աւելի բարւոք է, քան մեշտ դաստատն խոտոր կեանքը խանգարել։ Բայց և այնպէս պէտք է տանք հետևեալ խնդիրն. նա ինչ պէտք է անի, ինչ ընթի պէտք է նա ձեռնարկէ. արդեօք մի ուրիշ ուսումնարանի վերայ ծանրաբեռնուի. իր մտաւոր շրջանով ետուրիշ ուսումնարան վարակէ։

Կարևոր է, պարոննե՛ր, այս հարցերին որոշ պատասխան տալ։

Մանկավարժութիւնն այս հանգամանքում ուրիշ շատ հարցեր էլ ի՛առաջարկէ. պէտք է նա իւր մտաւոր շրջանի զարգացումն ընդհատէ, ընդարձակումը սահմանափակէ և մանի մի մասնագիտական շրջան։

Բայց մենք կարծում ենք, որ անշուշտ հարկաւոր է նորան մի ուրիշ շրջանի մէջ ձգել և խստ հսկողութեան տակ պահել։ Նորա զբաղմունքներն այն տեսակից պէտք է լինեն, որ սովորական անկարգութիւնները ճնշեն ու գիտակցութեան մէջ ամրանալու տեղ չը տան։ Ով գիտէ, թերևս նա կարողանայ ուղղուել։

Մի բան, որ ուրիշ յարմար հողի մէջ է դրուած, հասանական է որ կ՚աճի մինչդեռ իւր առաջուայ տեղում անշուշտ չորացած կը լինէր։ Նոյն իսկ անընդունելի շատ պահժների տեսակներ կան, որոնցից մինչն մէկը կը չիշեմ։ Երբ աշակերտներից մէկը մի որ և է յանցանք է գործում, ուսուցիչն ուղղակի դիմում է աշակերտներին, որ նոքա իրանց ընկերոջ յանցանքի համեմատ պատիժ նշանակեն։ Այդպիսի մի եղանակ ոչ մի ժամանակ մանկավարժական չէ կարող լինել, որովհետև առաջին՝ ուսուցիչն իւր այդ վարմունքով քիչ թէ շատ վնասում է իւր հեղինակութեան, երկրորդ՝ աշակերտը չունի ոչ կամք և ոչ էլ համոզմունք, որ կարողանայ յանցանքի համապատասխան պատիժ գտնել՝ նա աւելի խիստ պատիժներ կը որոշէ, երրորդ՝ գործնով կարելի է յանցաւոր աշակերտի պատուոյ զգացմունքներին դիպչել։

Պատիժների մասին առ այժմ այսքանս. Թերևս առիթ ունենամ այլ անգամ պատժի պատմութեան վերադառնալ։

Բ ա ր։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

8 դեկտեմբերի 1887 թ.

Ս. Պատրիարքի հրաժարման խնդիրը կը շարունակէ մնալ այն կացութեան մէջ, յորում կը գտնուէր սկզբէն ի վեր. ցաւալի է, սակայն այդպէս է իրողութիւնը։ Վերջին նամակաւ արդէն բացատրելէ յետոյ Յարութիւն Արքեպիսկոպոսի հրաժարման լոկ մի պատճառը, կը յարէի թէ անհատանական է, որ Բ. Դուռն իրագործէ Պատրիարքի հօր խնդիրներն։ Սմին ու կէսն կը լրանայ և արդարև չէ գործադրած և ոչ մի խնդիրն։ Որչափ ալ անկեղծ, որչափ ալ ազգային բարեվաստութեան տեսակէտով ծնունդ առած լինի Ս. Պատրիարքի հրաժարման պատճառն, այնուամենայնիւ նուազ իրաւունք ունինք դժգոհութիւն զգալու ընդդէմ կառավարութեան, որ այսպէս անգործադրելի կը թողու մեր բողոքն, որովհետև մեր գլխին եկող չարիքները մենք ինքեանքս կը պատրաստենք, գրեթէ կամաւ, և գարմանի համար կը դիմենք օտարին։ Շատեր կը չանան ազգային պարծանաց երևոյթ տալ Պատրիարք հօր հրաժարման պատճառներուն և կը մխիթարուին, կարծելով, թէ թուրք կառավարութիւնն կը վախնայ չը գործադրելու մեր ազգապետի. բողոքները, ոմանք ևս կը մեղադրեն զիս, որ այլապէս բացատրելով խնդիրը թերևս պատճառ եղած եմ «Արձագանք»-ի ընթերցողները հիասթափեցնելու։ Այդպիսիք նախամեծար կը համարեն օրօրուիլ անապարծութեան անուշ երազներով, քան տեսնել իրողութիւնները իրենց ճշմարիտ գոյնով։ Ընդհատելով դատողութեանց այս շարքն, դառնանք Յարութիւն Պատրիարքի հրաժարման երկրորդ խնդրին։

Ս. Պատրիարքը կը բողոքէ կառավարութեան, որ

Ձուլիչ Տիգրանի ժառանգական խնդիրը կը կարգադրուի հակառակ հայ եկեղեցւոյ օրինաց։ Այդ խնդիրն, որ այսօր մեր կրօնական իրաւանց հիմը քանդելու պատճառ կը հանդիսանայ, արդիւնք է հայ հոգևորականի մը շահասիրութեան։ Ձուլիչ Տիգրան թողլով իւր օրինաւոր կինը գաղտնապէս, սակայն ըստ հայ եկեղեցւոյ օրինաց, կամուսնանայ մի ուրիշ կնոջ։ Ձուլիչ Տիգրանի երկրորդ կնոջէն ունեցած տղաքները կը մկրտուին և կ՝արձանագրուին իբր հարազատ զաւակները. հօր մահուանէ յետոյ երկրորդ կնոջմէն եղած տղաքները ընականաբար կ՝ուզեն ճանաչուիլ իբր օրինաւոր ժառանգ, որոշեալ գումար մը կը պահանջուի «օրինաւոր ժառանգի» իրաւունք նոյա տրուելու համար, իսկ երբ նոքա կը մերժեն այնքան դրամ վճարել, կը զրկուին հարազատութեան կոչումէն. ուստի այդ տղայք կը դիմեն արդարութեան գործոց նախարարին։ Արդարութեան գործոց նախարարն ի նկատ առնելով նոցա թուղթերն օրինաւոր ժառանգ կը ճանաչէ զնոսա։ Ս. Պատրիարքն այսօր կը բողոքէ թէ զեղծման մը հետևանք է, որ նոքա իբր օրինաւոր զաւակ արձանագրուած են, սակայն ցաւալի կէտն հոն է, որ զեղծմանց հեղինակն անպատիժ մնացած է և կը մնայ, ինչպէս որ կը հաւաստեն, արտօնութիւն տուած է և ուրիշ շատ կրկնամուսնութեանց. այսպէս 70 ոսկիի շնորհիւ թողլատրած է իզմիրցի Էմմանէլչէ Գէորգ անուն մարդու մը երկրորդ անգամ ամուսնանալու։ Գէորգի առաջին կինն, որ յոյն մ՝է, գալով պատրիարքարան, կ՝աղերսէ, կը պաղատէ, կը բողոքէ, այլ ի զուր. ուտելու հաց պէտք էր գտնել և չէր կարող շարունակել իւր գանգատները։ Եւ գնաց, ո՛վ գիտէ, թշուառութեան որ վիհն ընկաւ. . . . «Ձուլաս կլանեն և զմժղուկս քամեն»։ Այդ ժառանգական խնդիրն, այսօր գրեթէ իւր կրօնական սահմանէն դուրս գալով, քաղաքական խնդիր եղած է, այսինքն խնդիր ընդ մէջ հայ եկեղեցւոյ և կառավարութեան, սակայն պարագայներն այն աստիճան անյարմար են հայ եկեղեցւոյ, որ անպատճառ պիտի կորուսանէ իւր դատն եթէ խնդիրը ներկայացուի ոչ – կրօնական դադարանի մը։ Հայ եկեղեցւոյ մէկ ձեռնհաս հոգևորական շահախնդրութեամբ եղծած է օրէնքն, սակայն այդ պատճառաւ ծնած են զաւակները, որոնք ապրուստի պէտք ունին, եթէ չը կատարուէր եղծումն չը պիտի լինէին և զաւակներն և արդի հանգամանքները. ուստի ոչինչ կը մնայ ընել, բայց եթէ առաջին եղծումը քաւել երկրորդ եղծումով մը, այն է այս պարագային եթէ ոչ օրինաւոր զաւակ, գէթ օրինաւոր ժառանգ ճանաչել և այսպէս չարիքը դարմանել չարիքով։

Երրորդ խնդիրն է նորընտիր քաղաքական ժողովի վաւերացումը։ Թերևս առաջ ալ, սակայն այն յայտնի է, որ վերջին տարիներ բաւական եղծումներ տեղի կունենան մեր ազգային խնդրոց մէջ։ Օրէնքը իրենց քմահաճոյից կը ծառայեցնեն։ Կը յիշեմ երբ Երուսաղեմայ պատրիարքական քաւէարկութեան ժամանակ Յարութիւն Սրբազան ամենէ աւելի քուէ ստացաւ, այն է 30—35 քուէ, ազգային ժողովոյ ատենապետն և իւր կուսակիցներն սկսան աղմուկ հանել թէ նոր քուէարկութիւն պէտք է կատարել, որովհետև ըստ սահմանադրութեան առնուազն 37 քուէ պէտք է պատրիարքի և նմանօրինակ ընտրութեանց համար։ Ազգային ժողովոյ ատենապետն և իւր կուսակիցք կուզէին Սէֆերեան Սիմոն եպիսկոպոսն ընտրել Երուսաղէմայ պատրիարք, իրենց ձեռաց մէջ ունենալով օրէնքն և ոյժը, հարկադրեցին երկրորդ անգամ քուէարկութիւն կատարելու, թէև ըստ Ներքին կանոնագրի առաջին քուէարկութիւնը կատարելապէս օրինաւոր էր։ Այս տարի ազգային ժողովոյ նոր ատենապետի ընտրութեան ժամանակ Յարութիւն էֆ. Մերիէմ Գուլի վերստին ատենապետ ընտրուեցաւ 10—15 քուէով և հազիւ 22 հոգի կար ժողովի մէջ, այն ևս առաւելապէս նորա կուսակիցներն, հակառակ կողմի մի քանի երեսփոխանները բողոքեցին թէ ապօրինի է ընտրութիւնն, սակայն այդ պահուն օրէնք հարցնող չը կար և Յարութիւն էֆ. այդքան քուէով ընտրուեցաւ Թուրքիոյ հայոց ազգային ժողովոյ ատենապետ։ Այս և նմանօրինակ փաստեր կապացուցանեն թէ օրէնքը խաղալիք է եղած հզօրներու ձեռաց մէջ։ Գրեթէ այսպէս կատարուած է և քաղաքական ժողովոյ ընտրութիւնը։ Ազգային ժողովոյ երեսփոխաններէ շատեր բողոքեցին այդ ընտրութեան դէմ, սահմանադրութեան վրայ հիմնելով իրենց փաստերն։ Ս. Պատրիարքն այդ եղանակաւ ընտրուած քաղաքական ժողովոյ ընտրութեան վաւերացումը խնդրեց կառավարութենէն. սակայն կառավարութիւնը չը վաւերացուց այդ ընտրութիւն, պատճառաբանելով թէ իւր տուած օրէնքով կատարուած չէ այն։ Նորընտիր քաղաքական ժողովոյ անդամոց մէջ չը կան այնպիսի անձինք, որ անհաճոյ թուին տէրութեան և ընդհակառակն նորա արդի ատենապետն Մաքսուտ Սիմոն Պէյն է, ում, երեք տարի առաջ, Սուլթանն անձամբ ըսաւ «գոհ եմ պաշտօնավարութենէդ», ակնարկելով նորա քաղաքական ժողովոյ ատենապետի պաշտօնավարութիւնը։ Այն ժամանակ երբ Սուլթանը կը յայտարարէր իւր գոհունակութիւնն, այսօր հաւանական չէ կարծել, որ թուրք կառավարութիւնը արգելքներ հանէ Սիմոն Պէյի կրկին անգամ ատենապետ լինելուն դէմ։ Այսպէս ուրեմն, քաղաքական ժողովոյ ընտրութեան անվաւեր մնալն չէ թէ մասնաւոր, այլ օրինական պատճառաւ է։ Թուրք կառավարութիւնն կամ նորա բարձրաստիճան պաշտօնեայք, ենթադրենք թէ Պէշիքթաշի զերեզմանատան կամ այլ մասնաւոր պատճառաւ անվաւեր կը թողուն այդ ընտրութիւն. սակայն եթէ ընտրութիւնը տեղի ունեցած լինէր կատարեալ օրինաւորութեամբ, կառավարութիւնը իւր հաշիւն յառաջ բերելու համար չը պիտի կարենար ո և է պատճառաբանութիւն յարուցանել և անխօս պիտի վաւերացնէր քաղաք-

կան ժողովոյ ընտրութիւնն։ Այս կէտի մէջ ևս բուն յանցանքն կը գտնենք մեր մէջ. . . սակայն և այսպէս բաղձանք, որ խնդիրն շուտով կարգադրուի ի նպաստ մեր պատրիարքարանին։

Վ. Ա.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Պ. Ղ. Ա.ՂԱՅԵԱՆՑԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ «ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՓԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

Ա.

Սոյն 1887 թուականի սկզբից «Աղբիւր» մանկական ամսագրի երկրորդ բաժինը գրած է պ. Աղայեանցի տրամադրութեան ներքոյ։ Պ. Աղայեանցը այդ տեղ է զետեղում իւր մատենագրական քննադատութիւնները։ Այդ ամսագրի դեկտեմբերի տետրակում պ. Աղայեանցը պատուել է մեզ, քննութեան ենթարկելով և մեր Մայրենի լեզուի քերականութեան տարերքի ա. մասը։

Կարդալով այդ քննադատութիւնը, մարդ ակամայ հարցնում է. մի՞թէ սա է կրիտիկան։ Եթէ կրիտիկան սա է, ապա ո՞րն է հայհոյանքը, ծաղրը։ Կամ գուցէ մեզանում, մեր կրիտիկոսների բերանում, կրիտիկա և հայհոյանք նոյնանիշ բառեր են դարձած։ Ձիշդ այդպէս է։ Կարդացէ՛ք այս նշանաւոր կրիտիկան, մի կողմ դրէք նորա մէջ կուտակուած ծաղրը ու ծանակը և, եթէ քաջ մարդ էք, ասացէք, թէ ի՞նչ գաղափար ստացաք քննութեան ենթարկուած դասագրքի վերաբերութեամբ. ի՞նչ է այդ գրքի բովանդակութիւնը. արդեօ՞ք դա քերականութիւն է, թէ քերականական նախապատրաստութիւն. քանի՞ բաժին ունի դա և որ բաժնում ինչի՞ վերայ է խօսվում. ի՞նչ սիստեմայի է հետևել աշխատասիրողը. տարբերվո՞ւմ է արդեօք դա իւր նախորդներից և կա՞ն արդեօք մեր մէջ այդ ձևով յօրինուած քերականական ձեռնարկներ։ Այս ամենի մասին և ոչ մի խօսք և ոչ մի ակնարկ։ Ձշմարիտ քննադատը նախ ընթերցողների առաջ պատկերացնում է քննելի գրքի ամբողջութիւնը առանց որ և է խարդախութեան և այնուհետև անում է իւր եզրակացութիւնները, որոնք որքան և անողոք լինին, համակրելի են, եթէ միայն ճշմարիտ են։ Բայց վերառնել մի գիրք, կարդալ նորան ծայրէ ծայր, գտնել մի երեք չորս բառ և նոցա վերայ հայհոյանքի մի ահագին շէնք կառուցանել, դա ներելի չէ պ. Աղայեանցի պէս մի մարդու, որ ոչ տղայ է և ոչ տղայամիտ։

Բ.

Պ. Աղայեանցը գուրկ չէ դիտելու ընդունակութիւնից. բայց քննադատ լինելու համար նորան պակասում է անկեղծութիւն և բարեխղճութիւն դէպի ուրիշի աշխատանքը. նա իւր վերաբերութեամբ մեծամիտ է, իսկ ուրիշի վերաբերութեամբ յանդուգն։ Դեռ ևս ոչ մի մարդ չը կայ պ. Աղայեանցի տեսակէտից, որ մի խելացի բան գրած լինի, բացի իրանից. բոլոր ընթերցարանները շինողները, դաստագիրք յօրինողները, բոլոր վիպասանները, բանաստեղծները և մինչև անգամ հրապարակախօսները պ. Աղայեանցի համար ողորմելի մարդիկ են, ունայն թուղթ մրոտողներ։ Պ. Աղայեանցը կարծել է և կարծում է, որ ինքն է մեր նոր գրականութեան տէրը և ներկայացուցիչը։ Սա թէ ծաղրալի է և թէ ծիծաղելի։ Դեռ ևս սորանից տասնումեակ—տասներկու տարի առաջ պ. Աղայեանցը, վիճաբանութեան մտնելով Գրիգոր Արծրունու հետ, համարձակութիւն ունեցաւ հրապարակով յայտնելու, որ ոչ ոք բացի իրանից, Պռօշեանից և Խ. Աբովեանից իրաւունք չունի որ և է վճռական կարծիք ունենալ աշխարհաբար լեզուի վերաբերութեամբ։ Պ. Արծրունին այն ժամանակ շատ արդարացի կերպով նկատեց, որ պ. Աղայեանցը իրան անձը գիտութեանց ակադեմիա է հռչակում, մանաւանդ որ պ. Պռօշեանցը այդ ժամանակ դադարել էր գրականութեան մասնակցելուց, իսկ Աբովեանցը վաղուց մեռած էր։

Վիճաբանելով պ. Ս. Մանդինեանի հետ, պ. Աղայեանցը, առանց այլևայլութեան, բոլոր պատրաստուած մանկավարժներին, բոլոր մասնագէտներին քշուեշտ անունը տուեց։ Շատերից այս երկու օրինակը բաւական է։ Այս տեսակ վարմունք որ և է մարդու կողմից ես միայն յանդգնութիւն կարող եմ վերագրել։ Դուք կարող էք սորան և մի ուրիշ անուն տալ, բայց չը պիտի մոռանաք, որ ձեր տուած անունը իմ տուածից մի քայլ հեռաւորութիւն հազիւ ունեցայ։

Գ.

Պ. Աղայեանցը դիտելու ընդունակութիւնից գուրկ չէ և եթէ նա կարողանար ենթարկել իւր անձը չքնաղ ազդեցութեանը, գուցէ և տանելի քննադատ լինէր։ Կըրթիչ—ահա՛ մի բառ, որը կարդալուն պէս պ. Աղայեանցը դիմելու է բառարանի բացատրութեանը և ականջ մօլորութեան մէջ է ընկնելու։ Բայց զգուշացնում ենք նորան. այդ բառը այնտեղ չի գտնիլ նա այն մտքով, ինչ մտքով մենք այստեղ մէջ ենք բերում։ Կրթիչը մի փոքրիկ երկաթի կամ պողպատի կտոր է, որ մատների մէջ, առնելով, կրթում են թելը, առաջ քան թէ նորանից գուլպայ, թաթման, պաճիճ կամ այլ ինչ կը գործէին. ուրեմն կրթիչը գործիք է, որ մաքրում, կոկում, նրբացնում է թելը և վեր է առնում նորանից այն անպիտան ու աւելորդ մասերը, կեղտի մնացորդները, որոնք թելի լաւութեանը վնասում են։ Կրթիչը մի ժողովրդական բառ է, իւր ծագումով գուցէ այնքան հին, որքան և քերական բառը, բայց որ, վերջինիս պէս, բառարանի մէջ չի մտել իւր նախնական առմամբ։ Բա-

ռարանի մէջ այդ բառը, ի հարկէ, կայ, բայց կայ իբր նոր, ստացական, գրական նշանակութեամբ. ժողովրդի համար կրթիչը գործիք է, անշունչ և նիւթական առարկայի անուն, իսկ գրականութեան համար նա մարդ է, դաստիարակող, ուսուցանող և առաջնորդող. տարբերութիւնը շատ մեծ է, թէ և բառի ուղղագրութիւնը բոլորովին մի և նոյն է: Հէնց այսպէս է և քերական բառը, որ ժողովրդի բերանում ապրել և պահել է իր նշանակութիւնը հարիւրաւոր տարիներ և դեռ ևս պիտի պահէ երկար ժամանակ: Հայ ժողովրդի բերանում քերական նշանակում է այն, ինչ որ ռուս ժողովրդի բերանում „грамота“ „граматка“ բառը: Եւ քերական իր այդ սկզբնական առմամբ, քերական իր գրական նշանակութեամբ և քերականութիւն իր ամենքին յայտնի նշանակութեամբ նոյնքան առընչութիւն ունին միմեանց հետ, որքան ռուսաց грамота, грамматикъ և грамматика բառերը, որոնց բոլորի արմատը յունական „грама“ բառն է, որ գիր կը նշանակէ, ինչպէս հայերէնի ֆէր արմատը, որ համազօր է գիր բառին: Այս այսպէս լինելուց յետոյ՝ պ. Աղայեանցի ճառը, որ նա յօրինում է քերականի և քերականութեան նշանակութեանց մասին, մոլորութեան հետևանք է, որ յառաջացել է այն հանգամանքից, որ նա չի հասկացել, թէ մենք քերական բառը ինչ առմամբ ենք գործածել և թէ ինչ առընչութիւն ունին այդ բառերն իրար հետ:

Դ.

Պ. Աղայեանցը հակառակ է, որ տարրական քերականութիւնը մուտք ունենայ տարրական դպրոցները: Այդ, ի հարկէ, իր ազատ կամքն է: Բայց այդ դեռ ևս իրաւունք չէ տալիս նորան շփոթելու բացատրական ընթերցանութիւնը քերականական վարժութիւնների հետ:

Տարրական կոչուած ուսումնարանը, ինչպէս յայտնի է, մեզանում հինգ կամ վեց տարուայ դասընթաց ունի: Պ. Աղայեանցը կարծում է, որ այդ վեց տարուայ ընթացքում աշակերտը պէտք է կարողանայ հասկանալ, որ «կարմիր ածական լինելուց առաջ դեռ պէտք է լինի մի որոշ գոյն, վարդը մի ծաղկի անուն, բացուիլը մի աճելութիւն, մայիսը մի յայտնի ամիս» և բացականչում է. «Մի՞թէ սոքա պակաս նշանակութիւն ունին, քան գոյականն ու ածականը, որոնք մնում են երեխայի համար անհասկանալի և անմբռնելի»:

Իսկ քարը, հողը, աղը, մազը. . . հարցնում ենք մենք, Է՛հ, քարն էլ քար է, հողը՝ հող, աղը՝ աղ, մազն էլ՝ մազ: Երևի քնելն էլ մի ուշաթափութիւն է, զարթիլը մի ուշաթափութիւն, շատը մի բազմութիւն, քիչը մի սակաւութիւն. . .

Ճշմարիտ որ սոքա պակաս նշանաւոր չեն, քան ածականն ու գոյականը, քան բայն ու մակբայը. և այդ ամենը սովորելու համար վեց տարին, ի հարկէ, շատ չէ:

Իսկ վեց տարուց յետոյ. . .

Վեց տարին անցնելուց յետոյ, երբ աշակերտը կը մտնէ թեմական դպրանոցի երրորդ դասատունը, պ. Աղայեանցը ընդդէմ չէ, որ նա սովորէ նա և քերականութիւն ասած բանը:

Ահա այստեղ պէտք է դնել մի մեծ «ըմբօ», պ. Աղայեանցի սիրած «ըմբօն», որ արդարև կարող էր մի դէվի, մի վիշապի կերպարանք առնել, որովհետև այս կարծիքն էլ մի հրէշային կարծիք է: Սորա հետ համեմատելով՝ «պայ» բառը դերբնական արարած, ինս ու չինս, համարելը մի անմեղ կատակ է:

Ի դէպ. պ. Աղայեանցը միթէ չը գիտէ, որ «պայ» նշանակում է գերբնական արարած, ինս սւ չինս: Այո՛, երբեմն Հայնարկութիւններն էլ մի մի չարագուշակ էակի պատկեր են առնում: Ապա այն ինչ կը նշանակէ, որ ասում են՝ «վայն» եկել է, Կիրակոսին տարել, եթէ նա միշտ այսպիսի խելօք կարծիքներ պիտի յայտնէ:

Ե.

Քերականական ուսման վերաբերութեամբ կարծիքները երեք խումբի են բաժանվում: Կան ուսուցիչներ, որոնք արտաքոյ քերականութեան լեզուի դասատանդութիւնն ըմբռնել չեն կարող. սոքա հին ուսուցիչներն են, որոնք քերականութիւնն ատանդում են որպէս մի սրբանուէր արուեստ, և իրանց դասատանդութիւնը տանում են այնպէս, ինչպէս այդ գիտութիւնը հասել է իրանց Ջամչեանների և Սալանթեանների ձեռքով: Սոքա հնամոլներն են: Կան և ուսուցիչներ, որոնք, նկատելով, գուցէ և իրանց անձի վերայ փորձած լինելով հին քերականների և քերականութիւնների ծանր ազդեցութիւնը, անպայման վնասակար են համարում նորա մուտքը ազգային ուսումնարաններում և նորանից խորշում են այնպէս, ինչպէս թուրքը խոզի մսից: Սոքա նոր, ինքնուս մանկավարժներն են, պ. Աղայեանցն էլ նոցա թուում: Սոքա այն ուսուցիչներն են, որոնք մի չարիք վերացնելու համար, դիմում են միւս չարիքին, մի ծայրահեղութիւնից ընկնում են միւս ծայրահեղութեան մէջ: Բայց բարեբաղդաբար կայ և մի միջին դասակարգ, որ անպայման չը մերժելով քերականական ուսման կարևորութիւնը, հարկաւոր է համարում դուրս ձգել նորա միջից այն ամէնը, ինչոր թանձրացնում, բարդում, յամրացնում է լեզուի ուսուցման գործը: Սոքա քերականութեանը գործնական կերպարանք են տալիս, բաժանելով նորա ուսումը զանազան շրջանների, նայելով մանուկների հասակին, նորա զարգացման աստիճանին և կրթական նախապատրաստութեանը. սոքա էլ պահանջում են նախ և առաջ, որ աշակերտը գիտենայ, թէ վարդը մի ծաղիկ է, կարմիրը մի որոշ գոյն, բացուիլը մի ամելութիւն, բայց նորա հետ նոքա պահանջում են, որ նա գիտենայ նաև, թէ ծաղիկը մի առարկայ է, կարմիրը մի որակութիւն, բացուիլ մի գործողութիւն, որ ամենայն առարկայ, ամենայն որակութիւն, ամենայն

գործողութիւն իւր անունը, իւր թիւը, իւր փոփոխութիւնը կերպն ունի։ Այսպէս ահա աշակերտը՝ բայի կարգաւորութ, կարգացածը հասկանուց, հասկացածը ըստ կարողութեան գրելուց, պիտի սովորի նաև բառերը զանազանել իրանց ներքին բովանդակութեան և արտաքին ձևի կողմից։ Աշակերտները նախ և առաջ առանց որ և է ձեռնարկի, լոկ ուսուցչի առաջնորդութեամբ, գործնականապէս ծանօթանում են անուան և նորա որպիսութեանց, գործողութեան և նորա պարագաների հետ, և ամէն անգամ, ամէն դէպքում, տեղն ու տեղը ծանօթանում են աւանդած գիտելիքների ուղղագրութեանը։ Առաջ նոքա ուղղագրութիւնը գիտէին ձայնագրութեան շնորհիւ, անգիտակցաբար, այժմ սովորում են գիտակցօրէն։ Առաջ նոքա «ախ, Կիրակոս, այս ի՞նչ արիր» նախադասութիւնը գրում էին կամ ուղիղ կամ սխալ, իսկ այժմ անպատճառ ուղիղ կը գրեն, որովհետև գիտեն, որ ախը մի ձայնարկութիւն է, որ Կիրակոսը մի յատուկ անուն է, որ նա միևնոյն ժամանակ մի կոչական բառ է, նախադասութեան մէջ ընկած, ուստի և գրուել է երկու ստորակէտի մէջ և այլն։ Այսպէս, գործնական կերպով, իրան նախագծած եղանակով ուսուցիչը մտցնում է աշակերտին ուսանելի առարկայի ուսումնասիրութեան մէջ և, մի շրջան անցնելուց յետոյ, երբ կամենում է հաշիւ տալ և հաշիւ առնել, համախմբում է իւր աւանդածները և տալիս է աշակերտին այն քերականական ձեռնարկը, որ իրան առաջնորդ է ունեցել։ Այսպէս են անում նոքա, որոնք ուսման մէջ ծայրահեղ սանձարձակութիւնը վնասակար են համարում, այսպէս են պահանջում մասնաժողովներից մշակուած և վարչութիւններից հաստատուած բոլոր պրօգրամները։ Ով որ իւր անձը ամենայն մասնաժողովներից վեր է համարում, նա, իհարկէ, չէ կարող սահմանափակուիլ այսպիսի նեղ շրջանակների մէջ։

Գալով քննադատութեան նիւթ տուող քերականութեանս, պէտք է ասենք, որ նա կազմուած է հէնց այդ ուղղութեամբ։ Նորա առաջին գլուխը, մեր կարծիքով, աշակերտները պէտք է կրկնեն երկրորդ տարուայ վերջերին, իսկ երկրորդ և երրորդ գլուխները երրորդ տարուայ նիւթն են կազմում և պիտի կրկնուին այդ տարուայ առաջին և երկրորդ կիսամեակների վերջերին։ Մեր գրքի առաջին գլխի բովանդակութիւնն է՝ առարկայ, շնչաւոր և անշունչ առարկաններ, մտաւոր և նիւթական առարկաններ, առարկայի թիւը, առարկայի որպիսութիւնը, որպիսութեան թիւը, առարկայի գործողութիւնը, գործողութեան թիւը։ Այս բոլորի համար գրքի մէջ գրած են 18 կանոն և 38 վարժութիւն։ Այնտեղ, ինչպէս տեսնում էք, ոչ գոյական անուն կայ, ոչ ածական, ոչ բայ, ոչ մակբայ, որոնց դէմ այդպէս գինուել է պ. Աղայեանցը։ Մասանց-Բանի որոշումը մտնում է մեր գրքի երկրորդ մասի մէջ, որ չորրորդ տարուայ դասընթացն է կազմում։

Պէտք է արդեօք աւելացնել, թէ ինչպէս պիտի գործադրուի Տարրական Քերականութեան այն գլուխը, որ հայերէն այբուբենի մէջ եղած նոյնահնչիւն տառերի ուղղագրութեանն է վերաբերում։ Պէտք է արդեօք յիշատակել, որ այն, ինչոր այդ տեղ համախմբուած էք տեսնում առանձին վարժութիւնների մէջ, ոչ մի օրուայ, ոչ մի ամսուայի և ոչ իսկ մի տարուայ դասաւանդութեան հետևանք պիտի լինին։ Ո՛չ, պարտաճանաչ ուսուցիչը պիտի գիտենայ, որ նոյն իսկ առաջին դասից, երբ աշակերտիներին սովորեցնում է, օրինակ, ո հնչիւնը և համեմատում է նորան ո-ի հետ, իւր նպատակը պիտի լինի ամենայն դէպքում մատնանիշ անել այդ տառի գործածութեանը և վերջի վերջոյ հասնել այն եզրակացութեան, որ աշակերտը ծանօթանայ օ-ով գրուող բոլոր բառերին իւր դասագրքի մէջ։ Սորա համար նա կարող է այլ և այլ միջոցների դիմել, բայց բոլոր այդ միջոցների վերջնական նպատակն այն պիտի լինի, որ աշակերտը տարուայ վերջը իւր ձեռքով կազմած ունենայ այն բառերի ցանկը, որոնց կը հանդիպի իւր դասագրքի մէջ օ-ով գրուած։ Այսպէս կանէ նա առաջին և երկրորդ տարին, կը համեմատէ, կը տեսնէ, որ արդարև օ-ով գրուող բառերը սահմանափակ են և ոչ մի կանոնի չեն ենթարկվում։ Այդ բառերը, իհարկէ, բոլորը չեն լինիլ. ընթերցանութեան դասագիրքը շատ անգամ չի տալիս աշակերտին այնպիսի բառեր, որոնք ամենասովորականներիցն են. այդ պատճառով ընդհանուր համարատութեան ժամանակ աշակերտն այդ բոլորը կը կրկնէ և կը լրացնէ նորինորոյ այն վարժութիւնների վերայ, որոնք զետեղած են իւր քերականական ձեռնարկի մէջ։

Պ. Աղայեանցը շատ է սարսափել մեր գրքի մէջ զետեղած այն վարժութիւններից, որոնց նպատակն է մանրամասնօրէն ծանօթացնել մանուկներին յ, ւ, ե, է, ո, ը, ու, իւ տառերի ուղղագրութեանը. նա, իհարկէ, չի կարողացել ըմբռնել խնդրի էական կողմը, որովհետև, երևի, իւր ուսուցչութեան ժամանակ երբէք չանհին ջափայ չի տուել այդպէս աստիճան առ աստիճան յառաջ տանելու մանուկներին այդ տառերի ուղղագրութեան մէջ. այժմ, հանդիպելով նոցա միատեղ ժողոված, սարսափել մնացել է, թէ ինչպէս կարող է մանուկը մի քանի դասերի ընթացքում իւրացնել այդ բոլորը։

Եթէ նա մի այդպիսի փորձ արած լինէր, հաւանօրէն թէ այսօր չէր զարհուրիլ այդ վարժութիւններից և թէ, որ գլխաւորն է, աշակերտներին մի բան սովորեցնելիս՝ ինքն էլ սովորած կը լինէր միևնոյնը և այժմ, ուրիշներին քննադատելու ժամանակ, ուղղագրութեան վերաբերութեամբ տարրական սխալներ չէր անիլ։

Բայց այդ մասին մի փոքր յետոյ։

Զ.

Ոչ ոք իրան անսխալական համարել չի կարող. մա-

Նաւանդ մենք շատ հեռու ենք այդ յանդգնութիւնից. բայց եթէ մենք մի սխալ արած լինինք, այդ կը վերագրենք մեր անհմտութեանը և չենք ամաչիլ հրապարակով խոստովանել դորան. մեծամտութիւնը չէ իշխում մեր բոլոր զգացմունքներին: Ով որ աւելի քաջն է, թող առաջին քարը նա բարձրացնէ. ով որ իրան անսխալական է համարում, թող նա ծաղրէ մեզ. մենք սմենայն խոնարհութեամբ գլուխ կը ծռենք նորա առաջ: Բայց մենք ամենևին չենք թոյլ տալ, որ մեզ մեղադրեն իմաստակութեան, բառերի կամայական տառադարձութեան մէջ, մանաւանդ այն մարդոց, որոնք մեզ իմաստակ անուանելով, իրանք իմաստակութեան մէջ են ընկնում:

Պ. Աղայեանցը մեզ ուղղագրութեան դաս է տալիս. ինչ կը լինի. մենք ամենայն համեստութեամբ պատրաստ ենք սովորիլ մինչև անգամ նորանից: Բայց սովորացնելու ժամանակ ինչ նշանակութիւն ունին խմաստակ, գրչանաչութիւն և այլ սոցա նման նախշուն բառերը:

Պ. Աղայեանցն ասում է, որ մենք չասել բառի ուղղագրութիւնը իմաստակութեամբ յեղաշրջել ենք և դարձրել ենք չալել, այսինքն թէ մենք առաջինն ենք եղել, որ ստեղծել ենք այդ բառը, թէ նա չ'կայ ոչ մի բառարանում և ոչ մի բարբառում:

Սխալվում է պ. Աղայեանցը. եթէ այդ բառը հնարովի էլ լինի, նա գիտէ, որ հնարողը մենք չենք: Դեռ սորանից երեք տարի առաջ մեր մէջ, մի քանի ուսուցիչների ներկայութեամբ, խօսակցութիւն եղաւ այդ մասին և ես նորան ասացի, թէ ինձանից առաջ ովքեր են գործ ածել այդ բառը. ի միջի այլոց ես նորան յիշեցրի հետևեալ ոտանաւորը, որի թարգմանիչը պ. Աղայեանցից շատ աւելի իրաւունք ունի հայտնի լինելու:

Գիւղացին ինց է անում
Իր արտումը բանելիս,
Աչքին քրտինք թափելիս,
Երբ իւր ցորենն է չալում,
Գիւղացին ինց է անում:

Պ. Թանգեանը, որ ներկայ էր այդ խօսակցութեանը, աւելացրեց, որ դեռ ևս այն ժամանակ, երբ պ. Տէր-Ղևոնդեանը չէր էլ մտածել գրիչ վեր առնելու, իւր ուսուցիչը ասում և ստիպում էր գրել այդ բառը այս ուղղագրութեամբ (կալսել): Ուզում եմ ասել, թէ պ. Աղայեանցը գիտէր, որ այդ բառը իմս չէ, բայց իւր քաղաքավարութիւնը ցոյց տալու և ինձ մի ածական շնորհելու համար, պէտք էր ինձ վերագրել:

Բայց բանն այն է, որ պ. Աղայեանցը ինձ իմաստակ անուանելով, ինքն է ընկնում իմաստակութեան մէջ: Կամենալով հաստատել չալել բառի սխալ լինելը, նա ասում է. «Մենք ունինք կալ, կամն, կասել (մէկայն): Եթէ կասելուն պիտի կալսել ասենք, ուրեմն կամնին էլ պիտի ասենք կալմն և վոխանակ ասելու կամնել, որ կասել կը նշանակէ, պիտի ասենք կալմնել»:

Նախ՝ կալ և կամն միևնոյն բառերը չեն, այդ գիտէ ամեն մի մանուկ. կալը այն տեղն է, ուր ցորենը կալսում են, իսկ կամն այն գործիքն է, որով կալսում են:

Երկրորդ՝ կասելը ամենայն անգամ կամնի միջնորդութեամբ չի լինում: Գիւղացին երբ կամենում է կտաւահատը կասել, նա հաշան է անում կալի մէջ, լծում է մի քանի ջուխտ եզներ և կալ է անում, այսինքն կալսում է. այստեղ մանրացնող, փշրող գործիքը էլ կամը չէ, այլ միայն եզների կճղակները.

Երրորդ՝ որովհետև կալը և կամը ոչինչ առընչութիւն չունին իրար հետ և միևնոյն բառերը չեն, ուստի եթէ մինչև անգամ կալսել բառը չալ բառից ստեղծած լինէինք մենք, այսինքն եթէ առարկայից գործողութիւն շինելու համար ել վերջաւորութիւնն աւելացնէինք, պէտք է կամն բառին էլ այդ մասնիկը կցէինք և ոչ թէ, ըստ Աղայեանցի, նորա մէջ խցկէինք չ տառը:

Չորրորդ՝ մենք միայն երեք բառ չունինք, որոնք հացաբոյսերը կասելու ժամանակ մեզ պէտք են գալիս, այլ շատ բառեր՝ չալ, այն հարթ, շրջանաձև տեղն է, ուր գիւղացին փռում է հաշանը: Սա ունի իւր կալապանը, որի տակը դարսում են խուրձերը անձրևից պաշտպանելու համար և մարաքը, ուր ժողովում են գարմանը: Յետոյ ունինք չաֆ, որով ծեծում, մանրացնում ենք, էշան, որով եղում ենք, մշան, որով մաղանում, ժողովում, թեղ ենք տալիս, հօսելի, որով քամուն ենք տալիս նորան, ցորենը գարմանից ջոկում ենք և այլն: Ուրեմն ինչի միայն երեք և ոչ տասներեք...

Է.

Մայրենի լեզուի քերականութեան առաջին մասի երկրորդ գլխի մէջ մենք, ի միջի այլոց, աշխատել ենք առանձին վարժութիւնների միջնորդութեամբ համախմբել միատեղ այն բոլոր բառերը, որոնք գրվում են յ, օ, և այլն տառերով: Մենք արդէն վերևն յակնարկեցինք, թէ ինչպես պիտի գործադրուին այդ վարժութիւնները: Ի մի ժողովելով բոլոր այն բառերը, որոնք գրվում են վերոյիշեալ տառերով և կամենալով՝ որ մեր գործը ամբողջութիւն ունենայ, մենք, ի հարկէ, չէինք կարող խոյս տալ մի քանի գրաբար և սակաւ գործածելի բառերից: Պ. Աղայեանցին այդ բանը խիստ չի դուր եկել. նա զայրացել է այդ «յիմար» բառերին հանդիպելով և անբարեխղճութիւն է տեսել մեր կողմից դոցա գործածութեան մէջ: Մեզ մի լաւ պատժելու համար՝ նա սկսել է մատնանիշ անել, որ մենք, այդ բառերը գրելիս, սխալներ ենք արել... «այնպիսի բառեր է օ-ով գրել (Տէր-Ղևոնդեանը), որ ո-ով են գրվում, ինչպես՝ թութթովել, լոչ, լոշտակ, ծուղակ և ոչ՝ ծօղակ, չեզոք և ոչ՝ չեզօք և այլն»:

Նախ՝ չեզոք բառը մենք օ-ով չենք գրել. այդ բառը չ'կայ մեր օ-ով գրուող վարժութիւնների մէջ. դուչ է

մեր գրքի մի ուրիշ երեսում, մի ուրիշ տեղ այդ բառը գրուել է պարոնի ասածին պէս, բայց դա մի լոկ տպագրական սխալ պիտի համարել։

Երկրորդ՝ թօշակ, լօշտակ, ծօղակ բառերը գրվում են ո-ով և օ-ով և ես, օ-ով գրուող բառերի աղիւսակը կազմելով, չէի կարող նոցա չը մուծել իմ աղիւսակի մէջ։

Երրորդ՝ չշ բառը միշտ գրվում է օ-ով և ոչ երբէք ո-ով, լաւագ նշանանակեր նա, թէ այն բոյսը, որին ժողովուրդը ալապաստրակի անգաճ (նապ. ականջ) է անուանում։ Թող իւր յիշողութեան մէջ պահէ սորան պ. Աղայեանցը

Չորրորդ՝ այլ է ՌոՌով և այլ ՌօՌով, այլ է թօթովել և այլ թօթովել։ Յիշեցէք բանաստեղծի խօսքը, պ. Աղայեանց՝

Թօթով լեզուիս մինչ կապերն
Արձակուեցան բացուեցան...

Այստեղ ՌոՌով, ո-ով գրուած, նշանակում է թլուատ, կակազ—թոյլ և դեռ ևս իւր կապանքներից չ՝ազատուած լեզու։ Այստեղից թօթովախօս, թօթովել և այլն։

Յիշեցէք և միւս բանաստեղծի ասածը՝

Հնչէ՛, հնչէ՛ յաւիտեան
Վեհ՝ դիւցազանց պերճ երգ դու,
Թօ՛ղ՝ չէ փոշիդ խոր մութէն,
Եւ յերևան պերճ երգ դու։

Այստեղ ՌօՌովել նշանակում է թափ տալ, թօթափել. թօթովել աչքերը—աչքերը ճպճըպացնել, աչքի թօթովները, թարթերը իրար մօտ բերել. թօթով ական—աչքի թարթը, կոպը. թօթով—ականթարթ։

Տարբեր են այս երկու բառերի ուղղագրութիւնը, տարբեր է սոցա նշանակութիւնը, թէև երկուսի յոյնագրութիւնն էլ միևնոյն է։

Այս ևս պահեցէ՛ք ձեր յիշողութեան մէջ, պ. Աղայեանց։

Այնուհետև ընդունեցէք խորին յարգանքս և թոյլ տուէք ցանկալ ձեզ յաջող նոր տարի և բարի կաղանդ։

Միւս անգամ։

Ն. Տէր-Ղևոնդեան։

ՓԵԼԻԵՏՕՆ

ՍԱՄՈՒԵԼ

ՊՕՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Զ.

ՈՂԱԿԱՆ ԱՄՐՈՑԸ

«Ատրուշանս շինէին ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանց. և բազում յինքեանց սեփհականան շինէին ատրուշանս, և զորդիս և զազգայինս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն։ Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհաւ սատակեաց. . . զմայր իւր» . . .

Փաւստոս։

Անցաւ աշունը, անցաւ և Հայոց դառնաշունչ ձմեռը։

Տարօնի ընդարձակ դաշտավայրը դեռ նոր սկսել էր կանաչազարդուիլ նորաբոյս խոտերով, դեռ նոր նորեկ ծիծեռնակը աւետում էր գարնան ուրախալի վերադարձը։ Լռեց փոթորիկը, դադարեց բքաբեր բորէասը, և նրանց փոխարէն՝ անուշ սիւքը մեղմ ալիքներով անցնում էր թաւշապատ հովիտների վրայով, տարածելով դէպի ամեն կողմ կեանք և զօրութիւն։

Գարնանամուտի առաջին առաւօտն էր։

Ողական ամրոցը այս առաւօտ մի առանձին հրապուրիչ տեսք էր ստացել։ Պատերը և սենեակների ճակատները դրսից ու ներսից պատած էին կանաչ թուփերով ու թարմ տերևներով։ Ծառանները, սպասաւորները, նաժիշտներն ու աղախինները, ամենքը տօնական հագուստներով զարդարուած, ձեռքները և մազերը կարմիր ներկած [1], վազվզում էին այս կողմ ու այն կողմ, և օրուայ պատշաճին վայել պատրաստութիւններ էին տեսնում։ Ամբողջ ամրոցը շնչում էր խորին, հոգեզուարթ բերկրութեամբ։

Սրևէ առաջին ճառագայթների հետ՝ որոտացին պալատական նուագարանները, և շարունակում էին անընդելի հնչիւններով ածուիլ։ Ողական ամրոցը տօնում էր Գարնանամուտը, որ, մի և նոյն ժամանակ, էր պարսից տարեմուտը [2]։

Դա չէր Հայոց սիրելի Նաւասարդը, Հայոց նոր տարին, որ իւրաքանչիւր ամի՝ աշխարհախումբ բազմութեամբ՝ տօնվում էր Աշտիշատի ծաղկազարդ տաճարներում [3]։ Դա Հայոց համար բոլորովին խորթ և բոլորովին օտար մի տօն էր, որ առաջին անգամ կատարվում էր Մամիկոնեանների ամրոցում։

Դա պարսկական տօն էր։

Ի՜նչեր չը փոխուեցան, ի՜նչ նորմուծութիւններ չեղան, սկսեալ այն օրից, երբ Սամուէլը թողեց այդ ամրոցը։ Հին, իրանց նախնական ծէսերին ու սովորութիւններին հաւատարիմ մնացած ծառաներն ու աղախինները այլ ևս չը կային։ Ոմանք կամովին հեռացան, ոմանց հեռացրեց Սամուէլի խստասիրտ մայրը։ Նոր ծառաներն ու նոր աղախինները կրում էին պարսկական հագուստներ, խօսում էին պարսկերէն։ Նրանցից շատերը պարսիկներ էին։ Հայ քահանան այլ ևս մուտք չունէր այդ ամրոցում։ Նրա փոխարէն իւր կրօնական պաշտամունքը կատարում էր պարսիկ մոգը։ Տնային վարժապետները, դաստիարակները, դայակներն անգամ, որոնք կրթում էին մանուկներին քրիստոնէական ոգւով, քրիստոնէական առաքինութիւններով,—փոխուած էին։ Նրանց պաշտօնը կատարում էին պարսիկ մոգերը, ուսուցանելով Մազդեզանց կրօնի հրահանգները։ Կերակուրներն անգամ փոխուած էին, ըմպելիքներն անգամ փոխուած էին։ Փոխուած էր և սենեակների կահաւորութեան, սարք ու կարգի ձևը։ Հին, աւանդական սովորութիւնների փոխարէն՝ տիրապետում էր նորը՝—պարսկականը։ Վաղեմի, նահապետական կար-

գերի վոխարէն, որոնց գեղեցկուհիները հէնց նրանց պարզուհեան մէջն էր, տիրապետում էր պարսկական զեղխուհիները, պարսկական շռայլուհիները։

Ձը կային նաև ամրոցի միւս բնակիչները։ Մուշեղ Մամիկոնեանի ընտանիքը տեղափոխուել էր Տայոց երկրի Երախանի բերդում[4]։ Վարդան Մամիկոնեանի այրին, տիկին Ջարուհին[5], իր զաւակների հետ՝ գտնվում էր նոյն պէս Երախանի բերդում։ Ձը կար և նազելի Որմիղդուխտը՝—Սամուէլի խորթ մայրը։ Նա հէնց այն ժամանակ թողեց Ողական ամրոցը և գնաց Պարսկաստան, երբ Սամուէլը հեռացաւ այդ ամրոցից։

Ամրոցում մնացել էր միայն Սամուէլի հարազատ մայրը՝—տիկին Տաճատուհին, որ այժմ միանդամայն նրա տէրն ու թագուհին էր։

Նա այս առաւօտ միայնակ շրջում էր ամրոցի մեծ դահլճում, ուշադրութեամբ գննում էր իւրաքանչիւր առարկան, իւրաքանչիւր մանրամասնութիւնը, տեսնելու, արդեօք ամեն ինչ իր տեղո՞ւմն էր, արդեօք ամեն ինչ կա՞ր, թէ մի բան պակաս էր։ Նրա ամբողջ հագուստը փայլում էր ոսկու և զոհարների մէջ։ Փայլում էր և նրա սիրուն դէմքը։ Մերուժանի մեծամիտ քոյրը Մերուժանի գեղեցկուհիննն ունէր, բայց զուրկ էր եղբօր դէմքի վսեմ արտայայտութիւնից։

Դահլիճը, տօնի պատշաճին համեմատ, շքեղ կերպով զարդարուած էր։ Յատակը պատած էր ամենաթանգագին գորգերով ու օթոցներով։ Պատերը ծածկուած էին ամենանուրբ դիպակներով և մետաքսեայ գոյնզգոյն կերպասներով։ Լուսամուտներում, յախճապակեայ զեղեցիկ թաղարների մէջ, դրուած էին նոր բացուած ծաղիկներ և գնացող մշտականաչ բոյսեր։ Ջրի, գինու, օշարակների անօթներն անգամ, որ շարուած էին սեղանի վրայ, պատած էին հրաշալի կանաչազարդութեամբ[6]։ Ամեն կողմում կանաչ, ամեն կողմում գալարիք, ամեն կողմում ժպտում էին ծաղիկները՝—նորեկ գարնան բերած պարգևները։ Ամբողջ դահլիճը սրսկած էր անուշահոտ վարդաջրով, և բուրում էր ախորժելի հոտաւետութեամբ։

Նոր տարին քաղցրացնելու համար, պատրաստուած էին գնացող տեսակ նուրբ քաղցրաւենիներ, որ համեմած էին արևելեան անուշահոտ համեմներով։ Տեղալին պտուղներից, ընդարձակ նաշխուն խաներով, դրուած էին սեղանի վրայ եօթն տեսակ չոր մրգեղէններ, որ խառնել էին միմեանց հետ[7]։

Թէև այդ տօնը Հայոց համար բոլորովին խորթ էր և նորամուտ, բայց Սամուէլի մայրը, տօնի թագուհին, այնքան շնորք և ճաշակ ունէր, որ կարողացել էր բացական վայելուչ ձև տալ նրան։ Այդ էր պատճառը, որ շատերը պատրաստուել էին մասնակցել, եթէ ոչ համակրելով, այլ աւելի տեսնելու բաղձանքով։ Բայց կային և այնպիսիները, որոնց թիւը փոքր չէր, որ պատրաստուել էին մասնակցել ամենայն սիրով և հաճութեամբ։ Հեթանոսական հին սովորութիւնների և հին պաշտամունքների խորին հետքերը դեռ ոչ լրիւ ջնջուած էին քրիստոնեայ Հայաստանից։ Իսկ ոմանք ստիպուած էին մասնակցել, երկիւղ կրելով Տիկնոջ չար վրէժխնդրութիւնից։ Մերուժանի քոյրը և՛ Մերուժանի անգթութիւնն ունէր, բայց զուրկ էր եղբօր մեծահոգութիւնից։

Նա դեռ միայնակ ճեմում էր շքեղազարդ դահլճի մէջ, որ կազմ ու պատրաստ սպասում էր այցելուներին, որ պիտի ներկայանային իր նոր տարին շնորհաւորելու։ Նայում էր շրջապատող առարկաների ճոխութեան վրայ և հիանում էր։ Բայց նրա հիացմունքը այնքան կարճատև, այնքան րոպէական էր լինում, երբ դառնում էր իր սրտին, իր ներքին զգացմունքներին։ Վաղուց էր, որ ոչինչ տեղեկութիւն չունէր ամուսնից։ Տեղեկութիւն չունէր և որդու՝ Սամուէլի մասին։ Ձը գիտէր նաև, թէ ինչ էր շինում եղբայրը՝ Մերուժանը։ Զարունակ հինգ ամիս՝ դառնաշունչ ձմեռը այնպէս սաստկութեամբ կտրել էր ամեն հաղորդակցութիւն, որ նրան դեռ յայտնի չէր, թէ ինչ աղէտներ, ինչ ողբալի գործեր էին կատարուել Հայոց աշխարհի հիւսիսային կողմերում։ Բայց նա ներքին խուլ բնազդմամբ մի բան զգում էր,—և անախորժ բան։

Նրա շրջապատողների մէջ արդէն տարածուել էր մի ինչ-որ շշունջ, մի ինչ-որ քրթմնջոց, որ ամենայն ծածկամտութեամբ աշխատում էին թագցնել։ Այդ նկատում էր նա, և նրա ալեհանջ սրտում ծագում էին զանազան կասկածաւոր խոկումներ։ Միւս կողմից, իր Հոլատակնեբի մէջ նկատում էր մի տեսակ անհանգստութիւն, և մի տեսակ բռնադատեալ խոնարհութիւն, որ յաճախից ցոյց էին տալիս նրան։ Ի՞նչ էր նշանակում այդ։—Նա դժուարանում էր ինքն իրան հաշիւ տալ։

Եղբօր, Մերուժանի, պարտութեան լուրը, և ամուսնի սպանման բօթը իր հարազատ որդուց,—դեռ նոր էին հասել Տարօն։ Բայց, տակաւին պտոյտվում էին անստուգութեան մթութեան մէջ։ Ոմանք դժուարանում էին հաւատալ, ոմանք, եթէ հաւատում էին, վախենում էին մի ուրիշին յայտնել։ Բայց այնուամենայնիւ, այդ համբաւները խորին ուրախութիւն պատճառեցին նրա հպատակներին, թէև դեռ ոչ ոք չէր համարձակվում իր զգացմունքները արտայայտել։

Նա կատարեց աւելի, քան կարելի էր կատարել։ Այն նորամուտ և խորթ ներմուծութիւնները, որ նրա ամուսինը և եղբայրը չը կարողացան սրով ու հրով մտցնել Հայոց աշխարհում, նա մտցրեց Մամիկոնեանների խաղաղ տան մէջ անարիւն պատերազմով,—այն տան մէջ, որ ամենահին ժամանակներից՝ միշտ ներկայացել էր որպէս մի ճշգրիտ տիպար քրիստոնէական բարեպաշտութեան։ Որքան ուրախ էր, որքան գոհ էր իր յաջողութիւններով։ Նա արդէն հողը պատրաստած էր համարում, և սերմը ցանած էր համարում, սպասում էր ցանկալի հունձքին։ Եւ որքան պիտի սիրէր նրան ամուսինը, երբ իր տունը վերադառնալու ժամանակ՝ ամեն ինչ պատրաստ կը գտնէր։

Բայց ինչն էր դրտում այդ փառասէր կնոջը՝ նեռուիլ

կրօնական խնդիրների մէջ, որ աւելի մեծ հանճարների գործ է: Իսկապէս, ոչինչ: Եւ եթէ նրա ամուսինը և եղբայրը զանազան քաղաքական նպատակներով էին առաջ տանում իրանց ապօրինի ձեռնարկութիւնները, նա, ընդհակառակն, նրանց նկրտումներն անգամ չունէր: Նա չունէր նաև կրօնական հաստատ համոզմունքներ: Բայց իրրև կին, և նորասէր կին, նա ունէր մի բան: Նա ազնուական էր, այդ բառի բուն նշանակութեամբ: Նրա համար՝ ինչ որ վերևից էր գալիս, ինչ որ վերևումն էր կատարւում,—բոլորը լաւ էր: Պարսից արքայական գերդաստանի հետ խնամութեան կապեր ունենալով, նա շատ անգամ առիթ էր ունեցել պարսից արքունիքում լինելու, և ծանօթ էր Զապուհի ընտանիքի հետ: Արքունիքը հիացրել էր նրան: Եւ որպէս Զապուհի կանանց հագուստն ու զարդերը նրան դիւր էին գալիս, նոյնպէս և դիւր էր գալիս նրան Զապուհի պաշտած կրօնը: Աշխատում էր նմանուիլ: Աշխատում էր, որ իւր գաւակները նոյն լեզուով խօսէին, որով խօսում էին արքունիքում, աշխատում էր, որ նրանք նոյն բարձր կրթութիւնն ունենային, որ վայել էր արքունիքին: Ինչ որ ազգային էր, ինչ որ Հայկական էր, նրան խիստ սոսկական էր թւում և, մինչև անգամ, ամօթալի: Ի՞նչու միշտ կարմրել պարսիկների մօտ, ինչու միշտ պակաս մնալ,—այդ մտքերը վրդովեցնում էին նրան:

Նա մօտեցաւ լուսամուտին, նայեց արեգակին: «Ի՞նչու այդքան ուշանում են. . . ինչ է նշանակում այդ»... մտածեց ինքն իրան, և նրա անհամբեր դէմքի վրայ երևացին բարկութեան նշմարներ: Միթէ իւր բոլոր պատրաստութիւնները պէտք է ապարդիւն մնային:

Սպասաւորները մէկ-մէկ ներս էին մտնում ու դուրս էին գնում, զանազան իրեղէններ բերելով ու տանելով: Ներս մտաւ և ներքինապետը, Համոյամոլ Բագոսը, իւր լերկ ու լպիրշ դէմքով:

Թէև Բագոսը վայելում էր իւր Տիկնոջ խորին հաւատարմութիւնը, բայց դարձեալ Տիկինը իւր արժանապատուութիւնից ստոր համարեց յայտնել նրան, թէ կասկած ունի, մի գուցէ տօնախմբութիւնը այն շքեղութեամբ չը կատարուի, որքան ցանկալի կը լինէր: Բայց խորամանկ ներքինին այն աստիճան ուսումնասիրած էր իւր Տիկնոջ բնաւորութիւնը, որ հէնց նրա երեսին նայելով, հասկացաւ, թէ ինչն է աղմկում նրա փառասէր սիրտը, և կեղծ ժպիտը երեսին ասաց.

—Մի քանի իրեղէններ պէտք է դուրս տանել, Տիկին:

—Ի՞նչու:

—Որովհետև տեղ չի լինի բոլոր այցելուների համար:

—Այդ ահագին դահլճում:

—Բայց այցելուների բազմութիւնն էլ ահագին կը լինի:

Տիկինը ուրախացաւ: Բայց թագցնելով իւր ուրախութիւնը, դարձաւ դէպի ներքինապետը, վրդովեցած ձևանալով.

—Պէտք է կարգի ու կանոնի սովորեն, Բագոս: Չարիքաւոր չէ, որ ամեն մի այցելու մնայ դահլճում և աւելորդ տեղ բռնէ: Նրանք կը գան, ընդունուած բարեմաղթութիւնները կանեն, և իմ օրհնութիւնը առնելով, դուրս կը գան կից սենեակը, այնտեղ կը սպասեն: Երբ կը վերջանայ ընդունելութիւնը, այնուհետև ինձ հետ միասին կը գնան ատրուշանը, երկրպագութիւն տալու սրբազան կրակին և ներկայ գտնուելու հանդիսաւոր զոհաբերութեան արարողութեանը:—Հասկացար: Գնա, ասա տաճարապետին, նա այդ կարգերը լաւ գիտէ, թող այնպէս կարգադրէ բոլոր ծէսերը, որ ամեն ինչ ըստ պատշաճին կատարուի և վայելուչ:

Ներքինապետը գլուխ տուեց, և անվերջ ժպիտը երեսին հեռացաւ:

Տիկինը մնաց միայնակ: Այժմ նա հանգիստ էր, այժմ լիապէս յոյս ունէր, որ տօնախմբութիւնը փառաւոր յաջողութիւն կը գտնէ:

Քառորդ ժամ չանցաւ, երբ սենեկապետներից մէկը ներս մտաւ, յայտնելով, թէ աւագանին և աստիճանաւորները խնդրում են ներկայանալ:

Նա անցաւ դահլճի վերևի կողմը, նստեց թանգագին գահաւորակի վրայ: Այդ միջոցին պալատական բարձր դրանիկները կարգով շարուեցան նրա բազմոցի շուրջը: Ամենքը զարդարուած էին տօնական հագուստներով, ամենքը զրահաւորուած էին ոսկեզարդ զէնքերով:

Ներս մտան աստիճանաւորները և ամբողջ աւագանին: Նրանք խորին կերպով գլուխ տուին, և լուռ կանգնած մնացին դահլճի պատերի մօտ: Տիկինը մի առանձին հաճութեամբ դարձաւ դէպի այցելուները, այդ խօսքերով.

—Փառք և գոհութիւն պայծառ Արամազդին, որ ինձ պարգևեց երջանիկներից ամենաերջանիկը լինելու վիճակը, և ես բախտ ունեմ, ով սիրելի աւագներ, ձեզ հետ միասին տօնելու այն մեծահանդէս օրը, որ տօնում է ամբողջ տիեզերքը: Թռչունն ու անասունը, վայրի խոտն ու ծաղիկը, և անտառի հսկայ եղևինը, այսօր ուրախ են, որովհետև նորեկ գարունը բերել է նրանց համար նոր տարի և նոր կեանք: Մարդը նոյնպէս՝ պէտք է իւր խընդակցութիւնը խառնէ բնութեան ընդհանուր հրճուանքի հետ: Անցաւ ձմեռը իւր մահաբեր սառնամանիքներով, անցաւ մռայլի ու մառախուղի թագաւորութիւնը: Ծագեց մեզ նոր օր իւր լուսապայծառ ջերմութեամբ: Իջաւ երկնքից սրբազան հուրը, և իւր կենադործող զօրութեամբ շունչ պարգևեց սառած տիեզերքին: Մեռած գետինը ուժ է ստանում, քնած ծառերը զարթնում են: Ամենուրեք շնչում է Աստուծոյ հոգին, ամենուրեք յարութիւն է առնում մահացած կեանքը: Բնութեան ընդհանուր գործունէութեան հետ՝ սկսվում են և մարդու աշխատութիւնները: Հերկավարը իւր արօրը տանում է դաշտը, այգեգործը սկսում է բրել խոնաւ երկիրը: Կանաչազարդ արօտների վրայ սփռվում են հովուի ոչխարները: Աշխատանքը սկսում է եռ գալ, որպէս եռ է գալիս ներշնչուած, ոգեւորուած գետինը: Ոչ միայն անհրաժեշտ է, ով սիրելի աւագներ, այլ մարդու սրբազան պարտքն է, որպէս բո-

լոր արարածներից աւելի ուշիմագոյնին, և որպէս բոլոր արարածներից աւելի առատութեամբ վայելողին բնութեան պարգևները,—որ նա, նախ քան իւր աշխատութիւնները սկսելը, իւր գոհութիւնը մատուցանէ այդ բոլոր բարիքները իրան պարգևողին: Այդ խնդիրը նպատակով մեր արժանայիշատակ նախնիքը սահմանել էին Գարնանամուտի տօնախմբութիւնը [8]: Բայց մենք, մեր նախնեաց ապաշնորհ հետևողներս, դադարեցինք կատարել: Վերանորոգենք արդարն ու ճշմարիտը, վերադառնանք բնականին, ով սիրելի աւադներ: Ահա այնտեղ, անշէջ ատրուշանի մէջ, վառւում է աստուածայինն հուրը,—ամբողջ տիեզերքին կեանք և ջերմութիւն պարգևող արարչագործ զօրութիւնը: Գնանք, և հանդիսաւոր գոհաբերութեամբ՝ մեր սէրն ու գոհութիւնը մատուցանենք այն զօրութեանը, որ անհասանելի և անքննելի աստուծոյ սրբազնագոյն օրինակն է մեր երկրի վրայ, և թող օրհնեալ լինի նրա փառքն ու պատիւը:

Տիկնոջ ճառը այն աստիճան խորին տպաւորութիւն գործեց հանդիսականների վրայ, որ ամենքը միաձայն կրկնեցին. «Եւ թող օրհնեալ լինի նրա փառքն ու պատիւը»:

Այնուհետև առանձին-առանձին մօտենում էին և, ծունր դնելով Տիկնոջ առջև, համբուրում էին նրա աջը, և ամենաջերմ բարեմաղթութիւններով՝ ցանկանում էին նոր տարու հետ և նոր բախտաւորութիւններ:

Տիկնոջ գահաւորակի աջ և ձախ կողմերում դրուած էին մի-մի ափսէներ, որ բոլորակ մատուցարանների ձև ունէին: Աջակողմեան ափսէն ոսկուց էր շինուած, և նրա մէջ դիզուած էին ոսկեայ դրամներ: Իսկ ձախակողմեան ափսէն արծաթից էր շինուած, և նրա մէջ դիզուած էին արծաթեայ դրամներ: Այդ խորհրդաւոր դրամները, իբրև նշան արծաթեայ և ոսկեայ բախտաւորութեան, յատկապէս կտրուած էին նոր տարու անունով: Պարսից արեգնափայլ արքան միայն իրաւունք ունէր նոր տարու սկզբում բաժանել իւր աւադներին այս տեսակ դրամները, և ընդ նմին, պարգևել նրանց արծաթեայ և ոսկեայ բախտաւորութիւններ [9]: Իսկ Մամիկոնեան Տիկինը, իբրև ընդհանուր Տարօնի թագուհին, ցանկանալով ոչինչ պակաս չը թողնել ընդունուած սովորութիւններից, իրան թոյլ էր տուել մի այսպիսի արտօնութիւն: Երբ աւագները մերձենում էին նրա աջը համբուրելու, նա ձեռքը տանում էր դէպի արծաթեայ և ոսկեայ ափսէները, և լի բրնով վերցնելով իւր մօտ դիզած դրամներից, խառնում էր միմեանց, և ապա ընծայում էր նրանց, փոխադարձապէս ինքն էլ ցանկանալով նոր տարու հետ և նոր բախտաւորութիւններ:

Սենեկապին մանկլաւիկները, ոսկեայ նախշուն սրուակներով, թափում էին այցելուների ափերի մէջ անուշահոտ վարդաջուր, որով նրանք օծում էին իրանց երեսն ու մազերը, յետոյ մօտենում էին անուշեղէնների սեղանին, վայելելու նոր տարուայ քաղցրութիւնները: Այնտեղ դրուած էին ամեն տեսակ բարիքներ և ամեն տեսակ զուարճալիքներ, որոնց մէջ դլխաւոր տեղը բռնում էր եօթնատեսակ չոր մրգեղէնների կոյտը—Հայրենի երկրի բնութեան բարիքը:

Մի խումբ սպասաւորներ, շքեղ կերպով հագնուած, վարդապսակ գլուխներով, կանգնած էին, և իւրաքանչիւրն ձեռքում ունէր արծաթեայ մեծ անօթներ, լի զանազան տեսակ անուշահամ օշարակներով և գինիներով: Անդադար լցնում էին, և ոսկեայ գաւաթներով մատուցանում էին հիւրերին:

Դրսում նուագարանները հնչում էին: Երգում էր քաղցրաձայն գուսանը:

Այցելութիւնները տևեցին բաւական երկար: Բազմութիւնը խումբ-խումբ ներկայանում էր և, վայելելով Տիկնոջ շնորհն ու քաղցրութիւնը, դուրս էին գալիս կից սենեակը, ուր պիտի սպասէին՝ ներկայ դտնուելու հանդիսաւոր զոհաբերութեանը: Կից սենեակում էս հիւրերի համար ամեն տեսակ մեծարանք պակաս չէր: Այստեղ նրանք աւելի ազատ, աւելի հոգեզուարճ կերպով անձնատուր էին լինում իրանց բաւականութիւններին: Խօսում էին, ծիծաղում էին, և իւրաքանչիւրը լի գոհունակութեամբ արտայայտում էր իւր ուրախութիւնը:

Տղամարդերի ընդունելութիւնը վերջանալուց յետոյ, սկսուեցաւ կանանց ընդունելութիւնը: Այդ վերջինների թիւը այնքան շատ չէր: Ներկայացան միայն ամբողջում ծառայող կանայքը և մի քանի աստիճանաւորների տիկիններ:

Կրակի սրբարանում արդէն սկսուել էր պաշտօնակատարութիւնը:

Ամբողջ այն կողմում, ուր վաղեմի ժամանակներից կանգնած էր Մամիկոնեանների տոհմային եկեղեցին [10], ուր մի շարք խուցերում բնակվում էր Գրան երէցը իւր պաշտօնեաների հետ, և կերակրվում էին իշխանական սեղանից,—այժմ նոյն եկեղեցու տեղում շինուած էր մի պարսկական ատրուշան: Սամուէլի մայրը քանդել տուել եկեղեցին և նրա տեղում հիմնել ատրուշանը: Քրիստոնէական կրօնաւորների խուցերում այժմ բնակվում էր Գրան մոգպետը իւր մոգերով:

Բարձր, ութնազարդ տաճարի մէջտեղում, մարմարիոնեայ քառակուսի սեղանի վրայ, վառվում էր որմզդական սուրբ հուրը և իւր անշէջ բոցերը տարածում էր մինչև տաճարի ընդարձակ կամարները: Մոգերը, զգեստաւորուած ճերմակ հագուստներով, և օծուած անուշահոտ իւղերով, հնչեցնում էին ձեռքներին բռնած փոքրիկ դանգակները, և երգելով թափօր էին կատարում կրակի շուրջը: Բազմութիւնը, ծունր դրած տաճարի կամարների ներքոյ, լսում էր, և երկիւղածութեամբ երկրպագութիւն էր տալիս:

Տաճարի մօտ պահած էին հարիւր հատ առողջ ու անբիծ խոյեր, սպիտակ, ձիւնափայլ գեղմով և ոսկեզօծ եղջիւրներով, որ պիտի յազէին [11]:

Այնօր բոլոր հանդիսականները պէտք է ուտէին սուրբ տաճարի սեղանից, ճաշակելով զոհուած մից:

Երբ սկսուեցաւ յազման սրարոզութիւնը, յայտնուե-

ցաւ Պամիկոնեան Տիկինը, շրջապատած իւր դրանիկների վայելչակազմ բազմութեամբ: Հանդիսաւոր կերպով մերձեցաւ սուրբ տաճարի սեմին, և խորին ջերմեռանդութեամբ ներս մտնելով, նախ երկրպագութիւն տուեց կրակին, և ապա երեք անգամ պտոյտուեցաւ սեղանի շուրջը[12]:

Այդ միջոցին բազմութեան մէջ անցաւ մի շշուկ, մի յանկարծակի իրարանցում, որ վերջը աղմկուեցաւ ուրախաձայն բացականչութիւններով: Բոլորի զարմացած աչքերը դարձան դէպի այն կողմը, ուր բացվում էին ամրոցի դըլխաւոր դռները:

Անհամբեր քայլերով ընթանում էր մի բարձրահասակ երիտասարդ, իսկ նրա ետևից՝ մի ստուար խումբ դինուած մարդիկների:

«Սամուէլ»... անունը հնչուեցաւ հազարաւոր բերաններում, և բազմութիւնը մի կողմ քաշուելով, ճանապարհ տուեց:

Երիտասարդը մօտեցաւ տաճարին:

«Սամուէլ»... կրկնեց նաև մայրը, և տաճարից դուրս վազելով, գրկեց որդուն:

Հանդիպումը խիստ սրտաշարժ էր և, մի և նոյն ժամանակ, խիստ եղերական:

—Ա՛խ, որքան ուրախ եմ ես, որքան երջանիկ եմ ես, սիրելի Սամուէլ,—ասում էր կարօտեալ մայրը, բայց չը թողնելով որդուն իւր գրկից,—որ դու ժամանում ես քո հայրենական ամրոցը մի այնպիսի բախտաւոր րոպէում, երբ քո մայրը կատարում է Գարնանամուտի մեծահանդէս տօնախմբութիւնը: Քո ներկայութիւնը, սիրելի Սամուէլ, մի նոր փայլ, մի նոր շուք կը տայ այդ տօնախմբութեանը:

Անսպասելի տեսարանը այն աստիճան յուզեց, այն աստիճան աստիկ խռովութեան մէջ դրեց անբախտ երիտասարդին, որ նա բոլորովին շփոթուեցաւ, և մի բառ անգամ չը գտաւ պատասխանելու մօրը:

Մայրը բռնեց նրա ձեռքից, ներս տարաւ տաճարը:

Սամուէլը թախծալի աչքերով նայեց կրակի վրայ, նայեց և մոգերի վրայ: Փոփոխութիւնը չափազանց անմխիթարական էր: Մտաբերեց, որ այժմեան ատրուշանը այն եկեղեցին էր, որտեղ աղօթել էին իւր նախնիքը, և որի սուրբ աւազանից ինքը ծնունդ էր առել:

—Մայր,—ասաց նա խռովեալ ձայնով,—ես ինձ բոլորովին դժբախտ եմ համարում, որ վերադառնալով իմ հայրենական ամրոցը, ամեն կարգ, ամեն սրբութիւն խանգարուած եմ գտնում: Եթէ ցանկանում ես, որ ես քո որդին լինեմ, հանգցրու այդ կրակը:

Մօր աչքերը վառուեցան բարկութեան բոցով:

—Ես աստուածասպան լինել կարող չեմ, Սամուէլ,—պատասխանեց նա, գայրացած կերպով հրաժարուելով:—Եթէ դու իմ որդին ես, պէտք է երկրպագութիւն տաս այն սրբութեանը, որ պաշտում է քո մայրը:

—Ուրեմն, ես կը սպանեմ քո աստուածուն, մայր:

—Չես համարձակուի, Սամուէլ:

Մոգերն ու մոգպետը երկիւղից մի կողմ քաշուեցան: Սամուէլի մարդիկը շրջապատեցին նրանց: Բազմութիւնը ապշած կերպով նայում էր, թէ ինչով կը վերջանայ մօր և որդու կռիւը: Տիկնոջ դրանիկներից մի քանիսը իրանց ձեռքը տարան դէպի սրերը, և գայրացած դէմքով սպասում էին նրա հրամանին: Սամուէլի մարդիկը նկատեցին այդ, իրանք նոյնպէս ձեռքները տարան դէպի իրանց սրերը:

Անզուսպ կատաղութիւնը տիրեց դժբախտ որդուն: Նրա սպառնական դէմքը այդ րոպէում ահռելի էր: Խորին վրդովմունքով դարձաւ դէպի մայրը, ասելով.

—Կրկնում եմ, մայր, հանգցրու այդ կրակը...

—Անկարելի է, Սամուէլ...

—Կրկնում եմ, հանգցրու այդ պղծութիւնը, եթէ ոչ...

—Եթէ ոչ, ինչ կանես...

—Քո արիւնով կը հանգցնեմ...

—Անիրաւ...

—Թող մարդիկ ինձ անիրաւ կոչեն, թող մարդիկ ինձ եղեռնագործ կոչեն, ահա, այն սուրը, որ սպանեց դաւաճան հօրը, կը սպանէ և ուրացող մօրը...

Վերջին խօսքերի հետ՝ նա ձեռքը տարաւ դէպի մօր գլուխը, բռնեց երկար գիսակներից, քաշշ տուեց կրակի սեղանի մօտ: Սուրը շողաց, տաք արիւնը թափուեցաւ սեղանի վրայ...

Բազմութեան միջից լսելի եղան ուրախաձայն աղաղակները.

—Արժանի էր...

Ր Ա Ֆ Ֆ Ի

Վ Ե Ր Ջ

Խմբագիր-Հրատարակիչ Ա.ԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բժշկապետ Ա.Ի. ԲԱԲԱՅԵԱՆԻ

Նոր բնակարանը գտնվում է ՖՐԷՅԼԻՆՍԿԻ փողոցի վերայ, տուն № 6: Ընդունելութեան ժամերն են ամեն օր կուրծքի և Զղայինհիւանդների համար կէսօրից յետոյ 5 ժամից մինչև 7 ժամը, հարկաւոր տեսակցութիւնների համար առաւօտեան 8-ից մինչև 9 ժամը:

10—6

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ հանդերձ լուսանկար պատկերով

ԳՐԵՑ ՏԻԳՐԱՆ ՓԻՐՈՒՄԵԱՆՑ

Գինն է 40 կոպէկ:

Օտարազգացիք հատով առնելիս, ճանապարհածախսի համար ուղարկում են 10 կ. մարկա: Տասնով առնողները ճանապարհածախս չեն վճարում: Գաւառական քաղաքների գրաւաճառները, որոնք տասից աւելի գնել կը կամենան, բացի ճանապարհածախսից, 10% զիջումն կունենան: Պէտք է դիմել՝ Тифлисъ, Центральная книжная торговля, ուր բացառապէս վաճառվում են գրքերը:

3—3

„Մ Շ Ա Կ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիւրքով և նոյն պրօգրամայով։ Մենք կը տանանք տեվական հետագիրներ։

„ՄՇԱԿի“ տարեկան գինը 10 րուբլի է. վեց ամսվանը 6 րուբլի։

Գրվիլ „ՄՇԱԿԻՆ“ կարելի է համբագրատուները (Բաթօնակաչ և Բազարնայա փոստոցների անկիւնում, Թամամշեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից „ՄՇԱԿԻՆ“ գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція газеты „МШАКЪ“, կամ արտասահմանից, Tiflis Rédaction du journal arménien „MSCHAK“։

Առաջիկայ տարվայ „ՄՇԱԿի“ պրօգրամը նոյնը կը լինի, այսինքն I. Առաջնորդող յօդուածներ. II. Ներքին տեսութիւն. Ընդհանուր յօդուածներ (հասարակական, գատաստանական, տնտեսական և այլն) ժողովակցութիւններ, լուրեր III. Կառավարչական կարգագրութիւններ. IV. Արտաքին տեսութիւն. Ընդհանուր յօդուածներ, ժողովակցութիւններ, լուրեր. V. Խառն լուրեր. VI. Հետագրերն ու Բօրսա. VII. բանաստեղծական. Ֆելիետօնները, Ճանապարհորդութիւնները, աղգագրական, ուսումնական յօդուածներ, վէպեր և այլն. VIII Յայտարարութիւններ։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով վճարը՝ քառեն 2 կոպէկ։ Տասն անգամից աւելի տպվող յայտարարութեան համար նշանաւոր զեղչում կը լինի։

Խմբագիր-Հրատարակող ԿՐԻՊՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

„ԱՂԲԻՒՐ“

ՄԻԱՄՍԵՒՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

(ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

1888 *թուականին.*

Կը հրատարակուի նոյն ծրագրով և նոյն աշխատակիցների օգնութեամբ։

Տարէնը լոյս է տեսնում 12 համ. 3—4 տպագր. մեր թից իւրաք. համարը։

Առաջիկայ 1888 թ. դիտաւորութիւն կայ խիստ ընդարձակել „Աղբիւրի“ բ. բաժինը, իսկ ա. բաժինը պէտք աշխատենք, պահպանելով ամսագրի բուն նպատակն ու ուղղութիւնը, դարձնել մի պատկերազարդ հանդէս վոխադրիչ շքեղ հրատարակութիւն։

„Աղբիւրի“ 1888 թ. I. պրեմիան՝ Յիսուս Նաւունը եւ Մոգերի երկրպագութիւնը էֆկտային օլէօգրաֆիա, արդէն թէ Թիֆլիսում և թէ գաւառներում մի-մի օրինակ կան ի ցոյց բաժանորդների։ Այս պատկերը կարող է ամենաշքեղ հիւրասենեակները զարդարող պատկերներից մէկը լինել։ 1888 „Աղբիւրի“ բաժանորդ գրուողը հէնց նոյն ատ պրեմիան բաժանորդ գրուելն պէտ։

„Աղբիւրի“ 1888 թ. Ш. պրեմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջաղեանի չափանի „Աղթամարայ Ծովակը“ վճռած կըզգուի „Աղբիւրի“ բաժանորդների մէջ սեպտեմբեր ամսին, նեկտյութեամբ Թիֆլիսում գտնուող բաժանորդների և հետագրերուղների։ „Աղթամարայ Ծովակը“ տանող բաժանորդը, եթէ կամենայ, կարող է այն թողնել համբագրութեանս և ստանալ 100 րուբլի։

«Աղբիւրի» բաժանորդագինը 3 ր. է, պրեմիաների ծրարի համար պէտք է ուղարկել 3 հատ 7 կ. մարկաններ։

ԱՊԱՒԻՆԿ ՈՉ ՈՔԻՑ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Агбюръ“, *իսկ արտասահմանից՝* Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ։

„ԱՐԱՐԱՏ“

Ա. Մ Ս Ա Գ Ի Ր

Կը հրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագրութիւնը տարեկան է և սկսվում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 րուբլի, Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում՝ 5 րուբլի, Հնդկաստանում 6 րուբլի։

Հասցէն Эчміадзинъ. Типогр. Комитетъ.

1888 *թ. կ. Պօլսում կը շարունակվի հրատարակվել նոյն ուղղութեամբ և խմբագրութեամբ*

„ՀՔԵՔԵԼՔ“

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Տարեկան բաժանորդագինն է օտար երկիր. համար **56** ֆր.
Վեց ամսեայ » » » **28** ֆր.

Հասցէն օտարերկրացիների համար՝

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Կը հրատարակվի ամեն ամսոյ սկիզբը։

Բաժանորդագրութեան գինն է կանխիկ 8 ֆրանկ. Վեցամսեայ 5 ֆր. Մէկ թիւ առանձին կը վաճառուի 1 ֆր.

Հասցէն՝ A la Rédaction de la Revue „Hantes“ Au Couvent des RR. PP. Mechitharistes. A Vienne (Autriche) VII. Mechitharistengasse 4.

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

ВЪ 1888 ГОДУ

(ПЯТЫЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по нынѣшней программѣ газеты литературной, общественной и политической.

Съ 12-го ноября 1887 г. „Новое Обозрѣніе“ выходитъ двумя изданіями, изъ которыхъ *первое*, вечернее, предназначено для Восточнаго Закавказья и сдается на вечерній поѣздъ желѣзной дороги, а *второе*, утреннее,—для гор. Тифлиса, Западнаго Закавказья и Россіи.

Условія подписки, съ пересылкою и доставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р. 50 к., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

Объявленія: на 4-й страницѣ газеты по расчету 5 к. за строку петита или за занимаемое ею мѣсто. На первой стр.—15 к. за такую-же строку.

Подписка и объявленія принимаются: **Въ Тифлисѣ**—въ конторѣ изданія, **Головинскій просп., домъ кн. Мухранскаго; Въ Баку**—въ отдѣленіи конторы, **при аптекѣ Чишковскаго,** на углу Барятинской и Милютинской улицъ; **Въ Кутаисѣ**—въ отдѣленіи конторы, **при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе**, противъ бульвара, въ домѣ Г. Андроникова.

Иногородніе адресуютъ свои требованія: **Въ Тифлисъ, въ редакцію „Новаго Обозрѣніе“.**

Редакторъ **М. А. Успенскій.**
Издатель кн. **З. Р. Тумановъ.**

ОТКРЫТА ПОДПИСКА

На ежедневную литературно-политическую газету

„КАВКАЗЪ“

Въ 1888 году газета „Кавказъ“ будетъ выходить подъ прежнею редакціею и по прежней программѣ, ежедневно, не исключая и понедѣльниковъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкою въ Тифлисѣ. На годъ 11 р. 50 к., на ½ года 6 р., на 3 мѣсяца 1 р. 50 к.

Съ пересылкою:

По Имперіи. На годъ 13 р., на ½ года 7 р., на 3 мѣсяца 4 р., на 1 мѣсяцъ 1 р. 75 к. По почтовому союзу. На годъ 18 р. 40 к., на ½ года 10 р., на 3 мѣсяца 6 р., на 1 мѣсяцъ 2 руб.

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи, Тифлисъ, уголъ Головинскаго проспекта и Барятинской улицы, домъ Ротинова.

Для иногородныхъ адресовать: Тифлисъ, въ редакцію газеты „Кавказъ“.

Արդէն ծախվում են կատարելագործուած, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ

ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԷԺԱՆ ԴՆՈՎ

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱԿԱՒՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ։

Գործարան Գ. Ա. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ. ԹԻՓԼԻՍՈՒՄ, ՎԷՐԱ, կոչուած Թաղում։

(4—15)

ՕՐԱՑՈՅՑՆԵՐ

1888 թ.

Կեդրոնական Գրավաճառանոցում.

1. Օրացոյց „Կեդրոնական Գրավաճառանոցի“ գինը	— 15
Տասնով առնողներին	— 10
Հարիւրով առնողներին	— 9
Հարիւրը չհատնով	— 8
2. Օրացոյց Տէր Աբրահամեանի	— 15
Դուժարով առնողին	— 12
3. Ս. Էջմիածնայ Օրացոյց	— 20
Դուժարով առնողին	— 18
4. Кавказскій Стенной Календарь	1 —
5. Царь Колоколъ, илюстр. всеоб. Календарь	— 45
6. Крестный Календарь	— 15
7. Крестовый Календарь	— 10
8. Календарь для учителей	1 —
9. Календарь Юридическій, Острогорскаго	1 —
10. Календарь Таварищъ	— 40
11. Календарь и запис. книж. . . . 80 մինչև	1 р. 50

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշխ. Եղնիկ քահանայ Երզնկեանց

Երրորդ տպագրութիւն, բարեփոխած և ճոխացրած.

Գինն է 60 կոպ.

Դումարով առնողները 20% զեղջ ունին։

Վաճառվում է Կենտրոնական Գրավաճառանոցում։

ԱՅՍ ՕՐԵՐՍ ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՓԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵՐՔԸ,

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Երէկուընէ բարեփոխեալ և ճոխ պատգրութիւն.

Աշխատ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ԳԵՒՈՆԴԵԱՆ

Գրքի բովանդակութիւնն է՝

Ա. ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.

Բ. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ.

Գ. ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ.

Դ. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

—

Ա, Առարկայ. շնչաւոր և անշունչ առարկաներ. մտաւոր և նիւթական առարկաներ. առարկայի թիւը. առարկայի որպիսութիւնը. որպիսութեան թիւը. առարկայի գործողութիւնը. գործողութեան թիւը։

Բ. Բառ և վանկ. հնչիւն և տառ. վանկելու էական կանոնները. յ տառի ուղղագրութիւնը. վ և ւ տառերի ուղղագրութիւնը. ռ և ր երկբարբառների գործածութիւնը. ո և օ տառերի ուղղագրութիւնը. է և ե տառերի ուղղագրութիւնը։ Ազիւսակ վերլուծութեան։

Գ. Նիւթական, ստորգետնեայ—նախադասութիւն. պարզաբանող բառեր։ Ազիւսակ վերլուծութեան։

Դ. Համառօտ և ընդարձակ նախադասութիւն. պարզաբանող բառերի տեսակները՝ որոշող, լրացնող, բացայայտէչ և պարագայական բառերը և նոցա տեսակները. կոչական բառեր։ Պարզ և միատոհմեալ նախադասութիւնները։ Նախադասութեան ուղղագրութիւնը։

Հայ ուսումնարանների հայոց լեզուի ուսուցիչներն իրաւունք ունին ձրիաբար ստանալ մի-մի օրինակ. քաղաքիս ուսուցիչները կարող են անձամբ վերցնել, իսկ գաւառների ուսուցիչները իրանց հասցէի հետ ուղարկում են իրենց ճանապարհածախք մի հատ 7 կոպէկանոց մարկայ։

ԳԻՆՆ Է 30 Կ.

Դումարով առնողին 20% զեղջ։

«ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ»

ԵՐԳԵՐ, ՊԱՐԵՐԳԵՐ ԵՒ ԱՂՕԹՔՆԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ձայնագրեց Ղազարոս Խահնայ Յովհաննէսեան

Գինն է 1 р. 50 կ. օտարաքաղաքացիների համար 1 р. 75 կ.

Այս երգարանը, իբրև մի նորութիւն մեր գրականութեան մէջ, արժանի է ամենայն քաջալերութեան։ Երգերը ձայնագրուած են եւրոպական նօտաներով բարձր դասակարգի հայ ընտանիքներին ևս հայերէն մանկական երգերի հետ ընտելացնելու։

Էջմիածնայ ուսումնական մասնաժողովից սոյն գիրքն ընդունուած է գործածելի դասագրքերի շարքի մէջ։

Վաճառվում է „Կեդրոնական Գրավաճառանոցում“ և պ. Սուզանաճեանի մօտ։

Дозв. Ценз. Тифлисъ, 26 Декабря 1887 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2